

## ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՅԱՏ

### Մարդկություն

Փորձեցէ՛ք ազգային ոգին դատարկել այն բովանդակությունից, որ պատմությունը կուտակել է նրանում, եւ դուք ազգը կը վերածէք մի դիմագուրկ զանգուածի:

Մարդ եւ մարդկություն հասկացողություններն, ընդհանրապէս, որոշ իմաստ են ստանում միայն այս կամ այն ազգի ոգու միջոցաւ: Ազգային հանճարն է որոշ բովանդակություն հաղորդում համամարդկայինին: Ազգութեանց փլատակների վրայ ճշմարիտ մշակոյթ չի՛ կարող ծաղկել: Տուեալ ազգությունից դուրս՝ կեղծ են մարդն ու մարդկությունը:

Մարդկայինը ազգայինին ներդաշնակելով՝ շահում է թէ՛ մէկը, թէ՛ միւսը: Եւ, ընդհակառակը, ազգայինը «համամարդկայինին» զոհելով՝ կորցնում է թէ՛ ազգը, թէ՛ մարդկությունը: Ո՛չ թէ մարդն, ընդհանրապէս, որ անգոյ մի բան է, այլ՝ դիմագծօրէն ազգային մարդը, որ խորիւմ էր ազգութեան միջոցաւ. մարդը, որ բովանդակում է իր հայրենի բնութիւնն ու պատմութիւնը: Օրուայ մարդը, աշխարհաքաղաքացիական խորթացուցիչ վարդապետութիւնների ազդեցութեան տակ, կորցնելու վրայ է իր իրական հոգեւոր կերպարանքը, իր բնացեղային էութիւնը: Անհրաժեշտ է մի արմատական յեղափոխութիւն, մի դարձ անարիւն վերացական մարդկայնութիւնից՝ դէպի օրգանականը, դէպի ցեղամարդը - իրական մարդը, որն իր հողին եւ ցեղին կապուած է իր էութեան բոլոր թելերով:

«Եւրոպական մարդկություն» (ԺԸ. եւ ԺԹ. դարերի), «Համաշխարհային մարդկություն» (Ի. դարի) - ես չեմ հաւատում ո՛չ մէկին, ո՛չ էլ միւսին: Եթէ գոյութիւն ունեցած լինէր եւրոպական մարդկություն՝ տեղի պիտի չունենային եւրոպականութեան համար դարերով ասիական խաւար ոյժերի դէմ ճակատած մեր ժողովրդի աննախընթաց ջարդերը:

### Անհատ

Դասակարգային սոցիալիզմը, քարոզելով սէր դէպի հեռաւորը - երբ համազգի մերձաւորների մեծագոյն մասը վատասերուում էր թշուառութեան մէջ - հակամարտութեան մէջ դրեց անհատն ու հաւաքականութիւնը, եւ այսպիսով խախտեց ազգն իբրեւ հոգեւոր ամբողջութիւն:

Անհատ, դու ազատ ես երջանկութիւնդ կառուցելու անգամ նմաններիդ դժբախտութեան վրայ - այս էր երէկ եւ է՛, մասամբ, եւ այսօր: Իրերի

այդ անբնական ու անբարոյական դրութեան մէջ, մարդկային բարոյական միտքը որդեգրեց ընդհանրապաշտութիւնը (ունիվերսալիզմը) իբրեւ հակոտնեայ՝ անհատապաշտական լիբերալիզմի:

Անհատ, ոյժերդ միացուր արինակիցներիդ ոյժերին՝ յանուն մեծ ամբողջի երջանկութեան - այս է օրուայ եւ վաղուայ ընկերային հրամայականը: Այլ խօսքով՝ անհատն իր բարիքը պիտի փնտռէ հանրութեան բարօրութեան մէջ: Ո՛վ հակադրում է անհատն ընդհանրութեան՝ մեղանշում է թէ՛ մէկի, թէ՛ միւսի դէմ: Ազգի կեանքից, բովանդակութիւնից դուրս ոչինչ է անհատը:

Ընդհանրականութիւնն է կամուրջ ձգում անհատների էութեանց միջեւ: Եւ ոգեխառնուելով միայն անհատը դառնում է հոգեւոր անձնաւորութիւն - արժէքաստեղծ ոյժ: Դասակարգային վարդապետութիւնները, պառակտելով ազգը, զայն վերածում են դիմազուրկ զանգուածների: Ձանգուածն սպանում է ցեղազգացումը, առանց որի անհատի մէջ մեռնում է նաեւ ազգականութեան զգացումը: Ահա՛ թէ ինչո՛ւ մենք ժխտում ենք լիբերալիստօրէն խորհող եւ գործող անհատն ու դասակարգը եւ դաւանում ազգն իբրեւ արժէքային ամբողջութիւն:

**Գ. ՆԺԴԵՅ**

*«Ռազմիկ», Սոֆիա, 1943թ.*

## **ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ Ռուբեն Մելքոնյան**

Ներկայումս Թուրքիայի արտաքին եւ ներքին քաղաքականության մեջ տեղի են ունենում ուշագրավ զարգացումներ, որոնք կարող են որոշակի փոփոխությունների սկիզբ դառնալ: Մասնավորապես, հաջորդ տարի սպասվող խորհրդարանական ընտրություններին ընդառաջ երկրի իշխող եւ ընդդիմադիր կուսակցություններում, ինչպես նաեւ ընդհանուր քաղաքական դաշտում, կատարվում են քայլեր, որոնք, հնարավոր է՝ ազդեն նաեւ ընտրությունների արդյունքների վրա:

Թուրքիայի ներքաղաքական կյանքի վերջին ժամանակների, թերեւս, ամենակարեւոր իրադարձություններից կարելի է համարել հիմնական ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) նախագահի փոփոխությունը: Այդ աթոռը զբաղեցնող Դենիզ Բայքալը, որը համարվում է Թուրքիայի քաղաքական դաշտի վետերաններից, հրաժարական տվեց, քանի որ շրջանառության մեջ էր դրվել նրա անձնական կյանքին վերաբերող սկանդալային տեսանյութ: Այս իրադարձությունը տեղի ունեցավ մայիսի 22-ին անցկացված ԺՀԿ համագումարից առաջ, եւ Բայքալը հայտարարեց, որ այլեւս չի առաջադրելու իր թեկնածությունը: Յիշեցնենք, որ ԺՀԿ հիմնադիրը Քեմալ Աթաթուրքն է, որը մինչեւ մահը ղեկավարել է կուսակցությունը: Մինչեւ 1950թ. ԺՀԿ-ն միանձնյա իշխել է Թուրքիայում եւ այսօր էլ համարվում է քեմալիզմի գաղափարախոսության եւ աշխարհիկության հիմնական կրողն ու պաշտպանը: Սկսված քննարկումների ժամանակ շրջանառվում էր կուսակցության նախագահի թեկնածուի մի քանի անուն, սակայն, ի վերջո, առաջադրվեց ԺՀԿ պատգամավոր Քեմալ Քըլլըչդարօղլուն, որը, ստանալով ձայների գերակշիռ մեծամասնությունը, ընտրվեց նախագահ:

Ընդհանրապես պետք է ասել, որ Քեմալ Քըլլըչդարօղլուն համարվում է շատ ինքնատիպ քաղաքական գործիչ, որը երկար տարիներ աշխատելով պետական ապարատում՝ մանրամասն տեղյակ է դրա բաց եւ փակ կողմերին: Ավելորդ չէ նշել, որ Քըլլըչդարօղլուն Թուրքիայի ներքաղաքական կյանքում հատկապես մեծ ճանաչում գտավ, երբ մի քանի սկանդալային բացահայտում արեց իշխող կուսակցության ներկայացուցիչ պաշտոնյաների կատարած ոչ օրինական գործողությունների վերաբերյալ: 2009թ. հենց նա էր ընդդիմադիր կուսակցության թեկնածուն Ստամբուլի

քաղաքապետի ընտրությունների ժամանակ եւ գրավեց երկրորդ տեղը՝ հավաքելով զգալի թվով ձայներ: Քըլըչդարոլուն ունի նաեւ «ժողովրդական» գործչի համարում եւ իր քաղաքական կարիերան կառուցում է «հասարակ ժողովրդից մեկը» լինելու սկզբունքի վրա, որը տալիս է դրական արդյունքներ: Նրա ելույթներում եւ հայտարարություններում գերիշխում են երկրի հասարակ քաղաքացիներին հուզող առօրյա խնդիրները, որոնց համար նա առաջարկում է որոշակի լուծումներ եւ սրանով էլ ընկալելի է դառնում հասարակության լայն զանգվածների համար: Բացի այդ, Քըլըչդարոլուն ցուցադրում է, որ չի առաջնորդվում կարծրատիպերով եւ, օրինակ՝ այն հայտարարությունները, թե իր մայրը հայուհի է, նա մեկնաբանել է շատ սառնասրտորեն՝ նշելով, թե ինքը չի կարող ընտրել իր ծնողներին եւ անկախ մոր էթնիկ ծագումից՝ իր սերը նրա հանդեպ չի պակասում: Այսինքն՝ նա մի կողմից չի ժխտել մոր հայկական ծագումը, մյուս կողմից՝ դրան տվել է այնպիսի պատասխան, որը թուրք հասարակության որոշակի շրջանակներում դրական է ընկալվել, քանի որ հարցը տեղափոխել է այլ հարթություն:

Հարկ է նշել նաեւ, որ այս պահին արդեն Քըլըչդարոլուն թարմություն եւ ակտիվություն է մտցրել ընդդիմադիր կուսակցության լճացած պատկերի մեջ, եւ դրա ապացույցն է այն ոգեւորությունը, որ իշխում է հասարակության ընդդիմադիր հատվածում: Սրանից բացի, Քըլըչդարոլունի մուտքով նույն գաղափարական դաշտում գտնվող, սակայն ԺՀԿ-ից հեռացած որոշ ուժեր հայտարարել են, որ սատարում են նոր նախագահին, ոմանք անգամ անդամագրվել են կուսակցությանը: Մասնավորապես, ԺՀԿ համագումարին ներկա գտնվեց եւ Քըլըչդարոլունի ողջունեց Թուրքիայի քաղաքական դաշտի լեգենդար դեմքերից մեկի՝ նախկին վարչապետ Բյուլենթ Էջեփի կինը՝ Ռահշան Էջեփը, որն իր ամուսնու քաղաքական կյանքի ու գործունեության անբաժան ուղեկիցն է եղել, իսկ վերջինիս մահից հետո դարձել է քեմալականների որոշակի շրջանակի առաջնորդը եւ մեծ հեղինակություն է վայելում: Բյուլենթ Էջեփը, ժամանակին տարածայնություններ ունենալով ԺՀԿ-ի հետ, առանձնացել էր՝ ստեղծելով Դեմոկրատական ձախ կուսակցությունը, եւ նրա կնոջ ներկայությունը ԺՀԿ համագումարում շատերն ընկալեցին որպես վերամիավորման ազդանշան: Նշենք, որ Քըլըչդարոլուն իր քաղաքական կերպարով փորձում է նմանվել Էջեփին եւ համարվում է նրա ոճի շարունակողը:

Ավելորդ չէ նկատել նաեւ, որ Քեմալ Քըլըչդարոլուն ծագումով Դերսիմից է, ալեւիական ընտանիքից, եւ նրա ընտրությունը ոգեւորություն է առաջացրել նաեւ այդ շրջանակներում: Մասնավորապես, Դերսիմից ընտրված անկախ պատգամավոր Քամեր Գենչը հայտարարել է, որ Քըլըչդարոլունի ընտրությունից հետո անդամագրվում է ԺՀԿ-ին, քանի որ

դա են պնդում իր ընտրողները: Միավորման եւ ուժերի համախմբման այս գործընթացը լուրջ ոգեւորություն է առաջացրել քեմալականների շարքերում, եւ նրանք դա համարում են մոտալուտ հաղթանակի եւ իշխանության գալու ազդանշան:

Այս նույն համատեքստում հարկ է անդրադառնալ Թուրքիայի քաղաքական երկնակամարում ծագող մեկ այլ հետաքրքիր քաղաքական գործչի՝ Մուսթաֆա Սարըգյուլի անձին: Համեմատաբար ավելի երիտասարդ սերնդին պատկանող գործիչը, որը նույնպես ԺՀԿ-ական էր եւ վերջինիս՝ նախկին նախագահ Դենիզ Բայքալի հետ ունեցած տարածայնությունների պատճառով դուրս էր եկել կուսակցությունից, այժմ նախածեռնել է «Թուրքիայի փոփոխության շարժումը», որը շուտով դառնալու է քաղաքական կուսակցություն: Սարըգյուլի հեռացումը լուրջ հարված էր ԺՀԿ-ին, քանի որ նա համարվում էր հաջորդ եւ խոստումնալից սերնդի ներկայացուցիչ: Սպասվում էր, որ Քըլըչդարոզլուի նախագահ դառնալուց հետո, Սարըգյուլը եւս կվերադառնա ԺՀԿ, սակայն, որոշ ժամանակ անց նա հայտարարեց, որ, այնուամենայնիվ, որոշել է ստեղծել նոր կուսակցություն. այսինքն՝ վերամիավորման հարցը փակվեց: Մասնագետները կանխատեսում են, որ առաջիկա ընտրություններից հետո Սարըգյուլի կուսակցությունն անպայման ներկայացված է լինելու խորհրդարանում, սակայն ուշագրավ է, որ լինելով ԺՀԿ-ի հետ գրեթե նույն գաղափարական դաշտում՝ փաստորեն, խլելու է նրա ընտրազանգվածի մի մասին: Սա թույլ է տալիս ենթադրել, որ Սարըգյուլին, այս կամ այն կերպ, աջակցում են նաեւ իշխանությունները եւ, մասնավորապես, իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը, որին, բնականաբար, ձեռնտու չէ իր մրցակից ընդդիմադիր ուժերի համախմբումը: Ավելացնենք նաեւ, որ Մուսթաֆա Սարըգյուլը երեք անգամ զբաղեցրել է Ստամբուլի Շիշլի թաղամասի ղեկավարի պաշտոնը եւ հանդուրժողական պահվածքի արդյունքում բավական լավ հարաբերություններ ունի տեղի հայ համայնքի հետ:

Հաջորդը հարկ է խոսել ազգայնական ուժերի մասին եւ նշել, որ ըստ սոցիոլոգիական հարցումների՝ Թուրքիայում ավելանում են ազգայնամոլական տրամադրությունները, ինչն արտացոլվում է ընտրությունների ժամանակ, եւ կանխատեսելի է, որ խորհրդարանում ներկայացված Ազգայնական շարժում կուսակցությունը ոչ միայն չի կորցնի իր քվեները, այլեւ կավելացնի իր ներկայությունը քաղաքական դաշտում:

Կանխատեսելի է նաեւ, որ քրդական խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցությունը եւս կպահպանի իր ընտրազանգվածը եւ հիմնականում Թուրքիայի արեւելյան ու հարավարեւելյան շրջաններում ձայներ ստանալով՝ ներկայացված կլինի խորհրդարանում:

Այս ամենի համատեքստում հարկ է նկատել, որ իշխող Արդարություն

Եւ զարգացում կուսակցության վարկանիշը վերջին ժամանակներս նվազել էր, ինչը ստիպեց իշխանություններին որոշակի քայլեր անել: Մասնավորապէս, արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող իրադարձությունները նրանք փորձում են զուգահեռել նաեւ ներքաղաքական զարգացումների հետ եւ դրանից օգուտներ քաղել, ինչը, կարծես թէ, ստացվում է: Օրինակ՝ հայ-թուրքական արձանագրությունների հետ կապված ողջ գործընթացն այսօր Թուրքիայում իշխող կուսակցությունը ներկայացնում է որպէս իր սկզբունքայնության դրսեւորում:

Ունենալով իսլամամետ ուժի համարում՝ ԱԶԿ-ն քայլեր է կատարում նաեւ առավել կրոնականացված հատվածի վստահությունը չկորցնելու ուղղությամբ, եւ Պաղեստինի խնդրում Թուրքիայի այսօրվա պահվածքը կապված է նաեւ այդ հանգամանքի հետ: Այստեղ, անշուշտ, դեր է խաղում նաեւ թուրքական վերնախավում ընդունված նեոսուննիզմի գաղափարախոսությունը, որով Թուրքիան փորձում է իսլամական աշխարհում առաջամարտիկի դեր ստանձնել: Կարելի է ասել, որ այս պահին Թուրքիան որոշ հաջողություն արձանագրեց, եւ այսօր Երդողանը իսլամական շատ երկրներում ընդունվում է որպէս լիդեր, իսկ այդ երկրներում նրա անվանը զուգահեռ աճում է նաեւ Թուրքիայի հեղինակությունը, եւ հակահարայելական բողոքի ակցիաների ժամանակ ծածանվում է նաեւ Թուրքիայի դրոշը: Բնական է, որ այս բոլոր գործողություններն իրենց ազդեցությունն են ունենում նաեւ երկրի ներսում եւ առավել կրոնամետ զանգվածների համար էլ ավելի ամրապնդում Երդողանի ու իշխող կուսակցության հեղինակությունը:

Այսօր դժվար է ասել, թե ինչ պատկեր կծեւավորվի Թուրքիայում՝ խորհրդարանական ընտրություններից հետո. կպահպանի՞ իշխող կուսակցությունն իր միանձնյա դիրքը, թե՞ ստիպված կլինի ձեւավորել կոալիցիա, եւ եթե այո, ապա ո՞ր քաղաքական ուժի հետ: Բացի այդ, եւ ԺԿԿ նոր առաջնորդ Քեմալ Բըլըչդարօղլուն, եւ «Թուրքիայի փոփոխության շարժման» ղեկավար Սուսթաֆա Սարըգյուլը չեն հայտարարել իրենց հստակ տեսլականն արտաքին քաղաքականության եւ, մասնավորապէս, հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Սակայն պարզ է, որ առաջիկա տարում Թուրքիայի քաղաքական դաշտում առավելապէս կգերիշխի գալիք խորհրդարանական ընտրությունների թեման, եւ ընտրությունների ու կառավարության ձեւավորումից հետո միայն կարելի է խոսել հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր զարգացումների մասին:

## **ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ Հայկ Գաբրիելյան**

ԽՍՀՄ փլուզումը պանթյուրքիստական տրամադրությունների զգալի աճ արձանագրեց Թուրքիայում, որն անմիջապես սկսեց մի շարք ուղղություններով (քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական) ներթափանցել Ադրբեջան ու Կենտրոնական Ասիա: Այս առումով յուրահատուկ տեղ գրավեց Նախիջևեանը, որը պանթյուրքիզմի տեսակետից առանձնահատուկ նշանակություն ուներ: Այդ տարածքը, ըստ էության, կապող օղակ է Թուրքիայի ու Ադրբեջանի, Թուրքիայի եւ ողջ Թուրանի միջեւ: Ժամանակին Հեյդար Ալիևը Նախիջևեանը որակել է որպես դեպի թուրք-իսլամական աշխարհ բացվող դուռ:

### **Թուրքիա–Նախիջևեան քաղաքական շփումները**

Նախիջևեանի Ինքնավար Հանրապետությունում (ՆԻՀ) սեփական ազդեցությունը մեծացնելու ուղղությամբ Թուրքիայի առաջին գործուն քայլը հանդիսացավ 1992 թվականի մայիսին Արաքս գետի վրա կառուցված Հասրեթ (թարգմանաբար՝ կարոտ) կամուրջը, որն ադրբեջանցիներն անվանում են նաեւ «Հույսի կամուրջ»: Կամրջի կառուցումը տեւել է մոտ մեկ տարի եւ արժեցել 9 միլիարդ 600 միլիոն թուրքական լիրա (մոտ 2 միլիոն դոլար): Կամրջի բացման արարողության ժամանակ Թուրքիայի վարչապետ Դեմիրելը հայտարարեց. «Այս կամրջի բացմամբ վերջ տրվեց 70-ամյա կարոտին: Թուրքիան եւ Նախիջևեանը «գրկախառնվեցին» միմյանց»:

1993 թվականի փետրվարի 5-ին ՆԻՀ-ում բացվեց Թուրքիայի գլխավոր հյուպատոսությունը: 2004 թվականի ապրիլի 12-ին Կարսում բացվեց Ադրբեջանի գլխավոր հյուպատոսությունը, ինչը Թուրքիայում բացված Ադրբեջանի երկրորդ գլխավոր հյուպատոսությունն էր (առաջինը բացվել էր 1992 թվականին Ստամբուլում): Կարսի ադրբեջանական հյուպատոսության աշխատանքային շրջանակներում են ներառված Թուրքիայի արեւելյան 17 վիլայեթները: Կարսի ընտրությունը նույնպես պատահական չէր, քանի որ Կարսի վիլայեթում բնակվում են մեծ թվով ադրբեջանցիներ: Այս ամենը պետք է ամրապնդեր Թուրքիա–Նախիջևեան

կապերը: Ներկայումս Ադրբեջանը պլանավորում է եւս մեկ հյուպատոսություն բացել Էրզրումում:

Ի դեպ, Կարսում ադրբեջանական հյուպատոսության բացման կապակցությամբ Իգդիրի վիլայեթի բնակչությունը դժգոհություն հայտնեց, թե ինչու այն չի բացվել Իգդիրում, որը համարվում է դեպի ՆԻՅ բացվող դարպաս: Դժգոհության պատճառն այն է, որ ՆԻՅ այցելել ցանկացող Իգդիրի բնակչությունը վիզա ստանալու համար ստիպված է մոտ 400 կիլոմետր ճանապարհ կտրել՝ Կարս հասնելու եւ հետ վերադառնալու համար: Իգդիրի բնակչությունը հուսով է, որ շուտով կվերացվի երկու երկրների միջև գործող վիզային ռեժիմը:

2008 թվականի հունիսի սկզբին ՆԻՅ այցելեց Թուրքիայի վարչապետ Էրդողանը, ինչը հանդիսացավ թուրքական կառավարության ղեկավարի երկրորդ այցը (ինչպես արդեն նշվել է, դրանից 16 տարի առաջ ՆԻՅ էր այցելել վարչապետ Սուլեյման Ղեմիրելը): Էրդողանի այցի ժամանակ քննարկվեցին դեպի ՆԻՅ կառուցվելիք երկաթուղու եւ գազամուղի խնդիրները: Նույն թվականին բարեկարգվեց Իգդիր եւ Նախիջեւան քաղաքները միմյանց կապող 129 կիլոմետր երկարությամբ ավտոճանապարհը:

2009 թվականի հոկտեմբերի 3-ին Նախիջեւանում տեղի ունեցավ թյուրքալեզու երկրների ղեկավարների 9-րդ գագաթաժողովը, ուր ստորագրվեց «Թյուրքալեզու երկրների համագործակցության խորհրդի ստեղծման» մասին համաձայնագիրը: Գագաթաժողովում Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլը նշեց. «Նախիջեւանը հարազատ ու թանկարժեք է եւ Ադրբեջանի, եւ Թուրքիայի համար: Նախիջեւանը Թուրքիայի համար ունի վիթխարի նշանակություն: Ֆիզիկական առումով նախիջեւանյան տարածաշրջանում Թուրքիայի ու Ադրբեջանի սահմանը փոքր է, սակայն քաղաքական առումով 10-12 կիլոմետր երկարությամբ սահմանն ունի ծայրահեղ կարեւորություն: Մեր այս սահմանը հանդիսանում է շատ խորհրդանշական անցում, որն աշխարհագրորեն Թուրքիան կապում է թյուրքական երկրների հետ»: Պետք է նշել, որ Գյուլը ՆԻՅ-ում իրեն պահում էր տանտիրոջ մասն, ինչը բխում էր այնտեղ առկա թուրքական մեծ ազդեցությունից. պատահական չէ, որ ՆԻՅ-ը ճանաչել է այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության անկախությունը:

2009 թվականի նոյեմբերին Տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամի (TEPAV) արտաքին քաղաքականության վերլուծաբան Բուրջու Գյուլթեքին Փունսմանն իր «Արեւելյան



դուռ հանդիսացող նախիջեւանյան փականի բացումը» հողվածում նշում է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կարող է դրական առումով էապես փոխել Նախիջեւանում տիրող իրավիճակը: Այդ կապակցությամբ Փունսմանը Հայաստանին առաջարկում էր վերացնել Նախիջեւանի շրջափակումը՝ որպես բարի կամքի դրսեւորում: Դրա արդյունքում ՆԻՀ-ը հնարավորություն կստանար ուղղակի ցամաքային կապ հաստատել Բաքվի հետ եւ կվերածվեր հյուսիս–հարավ եւ արեւմուտք–արեւելք ուղղություններով տրանսպորտային ու տարանցիկ հանգույցի: Թուրք վերլուծաբանի նման լավատեսությունը պայմանավորված էր 2009 թվականի հոկտեմբերի 10-ին դիվանագիտական հարաբերություններ սկսել ենթադրող հայ-թուրքական արձանագրությունների ստորագրմամբ:

2010 թվականի ապրիլին Թուրքիա այցելեց ՆԻՀ Գերագույն մեջլիսի նախագահ Վասըֆ Թալիբովը: Վերջինս Անկարայում հանդիպումներ ունեցավ արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի եւ պետնախարար ու փոխվարչապետ Հայաթի Յազըջըի հետ: Հանդիպման ժամանակ Դավութօղլուն նշեց. «Թուրքիան Նախիջեւանի ապագան կառուցելու գործում եղել է առաջատար եւ կշարունակի այդ կերպ վարվել»: Դավութօղլուն նաեւ հավելեց. «Թուրքիան հարգում է իր կնքած միջազգային փաստաթղթերը եւ Կարսի «խաղաղության» պայմանագրով շարունակում է մնալ Նախիջեւանի անվտանգության երաշխավորը: Թուրքիան Նախիջեւանի կարգավիճակի երաշխավորն է, եւ դա ակնհայտ է: Դա միջազգային իրավունքի պահանջն է եւ Թուրքիայի պարտականությունը»: Դավութօղլուն խոսքը եզրափակել է հետեւյալ կերպ. «Նախիջեւանի անվտանգությունն ու բարօրությունը մեր անվտանգությունն ու բարօրությունն են»:

Ապրիլի 27-ին Թալիբովին ընդունեց վարչապետ Էրդողանը: Նրանց փակ զրույցը տեւել է մոտ մեկ ժամ: Ապրիլի 28-ին Չանքայա նախագահական նստավայրում Թալիբովին հյուրընկալեց նաեւ նախագահ Գյուլը: Այս զրույցի մանրամասները նույնպես չեն հաղորդվում: Ապրիլի 29-ին Թալիբովը եղավ նաեւ Կարսում ու Իգդիրում, որտեղ կողմերի քննարկման թեմաներն են հանդիսացել «Կարս–Իգդիր–Նախիջեւան» երկաթուղու, 1997 թվականից կառուցվող Իգդիրի օդանավակայանի, «Իգդիր–Նախիջեւան» գազատարի, Թուրքիայի, Իրանի եւ Նախիջեւանի միջեւ ազատ արդյունաբերական գոտի ստեղծելու խնդիրները:

Թալիբովի այցելության արդյունքում թուրքական արտգործնախարարությունն ապրիլի 28-ին հայտարարեց. «Ադրբեջանի հետ սահմաններ

չունեցող ՆԻՅ-ը մնացել է միայնակ Չայաստանից բխող անվտանգության սպառնալիքների հանդեպ: Այդ սպառնալիքի չեզոքացման համար մեր երկրների միջև հարաբերություններում շատ կարելու է համարվում ռազմական համագործակցությունն Ադրբեջանի ու Նախիջևանի հետ»:

Որոշակի տվյալներով՝ Թուրքիան ներկայումս մտադիր է, ադրբեջանական կողմի համաձայնությամբ, ՆԻՅ-ում ռազմակայան ստեղծել: Սակայն այս կապակցությամբ Անկարայի Տնտեսական և տեխնոլոգիական համալսարանի (TOBB ETÜ) դոցենտ Միթաթ Չելիքփալան մայիսի 24-ին հայտարարեց, որ Թուրքիան նման պլաններ չունի: Անշուշտ, ՆԻՅ-ում գործեր տեղակայելը Թուրքիայի համար խիստ ցանկալի է, սակայն հաշվի առնելով այլ ուժի կենտրոնների հնարավոր հակազդեցությունը տվյալ դեպքում՝ այդ քայլը ներկայումս գրեթե բացառվում է:

### **Թուրքիա–Նախիջևան տնտեսական շփումները**

2007 թվականի փետրվարի 8-ին Թբիլիսիում Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան կնքեցին Բաքու–Թբիլիսի–Կարս (ԲԹԿ) երկաթուղու կառուցման պայմանագիրը, որի ավարտը նախատեսված է 2011–2012 թվականներին: ԲԹԿ-ի կառուցման հետ մեկտեղ, Չարավային Կովկասում օրակարգ մտավ «Կարս–Իզդիր–Նախիջևան» (ԿԻՆ) երկաթուղու կառուցման հարցը:

2010 թվականի մայիսին Ադրբեջանի տրանսպորտի նախարարության ներկայացուցիչ Ս.Մենեդովը հայտարարեց. «Կարս–Իզդիր–Նախիջևան երկաթուղին, որը կհանդիսանա Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղու շարունակությունը, կապահովի Ադրբեջանի և Նախիջևանի ինքնավար մարզի միջև հաղորդակցությունը: Նախիջևանի տարածքում կկառուցվի 7 կիլոմետրանոց երկաթուղի, որը Թուրքիան կմիացնի ՆԻՅ-ին»: Մենեդովը հուսով է, որ այն կկառուցվի ու շահագործման կհանձնվի մոտ ժամանակներս. «Չետագայում, երբ «կազատագրվեն օկուպացված տարածքները», կվերականգնվի Բաքու–Նախիջևան երկաթուղու աշխատանքը և դրանով Նախիջևանը կվերածվի տարածաշրջանի խոշորագույն տրանսպորտային հանգույցներից մեկի»:

Չարկ է նշել, որ այժմ ՆԻՅ-ում գործում է միայն «Նախիջևան–Թավրիզ» երկաթուղին: Եվ եթե ԿԻՆ երկաթուղին միացվի դրան, ապա 2009 թվականի օգոստոսի վերջից գործող «Իսլամաբադ–Թեհրան–Ստամբուլ» (ԻԹՍ) երկաթուղային ճանապարհը կկրճատվի 4 օրով (ներկայումս գնացքն այդ ճանապարհը հաղթահարում է 15 օրում):

ԲԹԿ-ի և ԿԻՆ-ի շահագործման հանձնելու պարագայում, երբ

Թուրքիայի ու Նախիջեւանի միջեւ կապահովվի երկաթուղային հաղորդակցությունը, Հայաստանը կհայտնվի երկաթուղային օղակի մեջ: Նման պարագայում Հայաստանի համար առաջնահերթ է դառնում Իրան–Հայաստան երկաթուղու կառուցումը, որը նախնական հաշվարկներով կարող է տեւել 5 տարի եւ կարժենա 1.5-2 մլրդ դոլար:

2010 թվականի մայիսին Էրդողանը հայտարարեց, որ հունիսի 17-ից սկսվելու են կանոնավոր ավիաթռիչքները Թուրքիայի ու ՆԻՀ-ի միջեւ: «Հունիսի 17-ից մենք ձեռնամուխ կլինենք օդային փոխադրումներին, եւ մեծ է հավանականությունը, որ այդ արարողակարգին կմասնակցեն մեր արտագործնախարարները: Türk Hava Yolları (Թուրքական ավիաուղիներ) ընկերությունը շաբաթական երեք թռիչք կիրականացնի Ստամբուլից Նախիջեւան»:

2009 թվականի օգոստոսին Թուրքիան եւ ՆԻՀ-ը (Ադրբեջանը) ստորագրեցին «Իգդիր–Նախիջեւան» գազատարի կառուցման մասին պայմանագիրը: Այդ աշխատանքները թուրքական կողմից իրականացնելու է «BOTA<sup>a</sup>» ընկերությունը, իսկ ադրբեջանական կողմից՝ Ադրբեջանի Պետական նավթային ընկերությունը («SOCAR»): Թուրքական կողմից պայմանագիրը ստորագրել են Էներգետիկ եւ բնական ռեսուրսների նախարար Թաներ Յըլդըզը եւ «BOTA<sup>a</sup>»-ի գլխավոր տնօրեն Սալթուք Դյուզլը, ՆԻՀ-ի կողմից՝ վարչապետ Էյյուվեսթ Բահշիեւը եւ «SOCAR»-ի տնօրեն Ռովնագ Աբդուլաեւը: Նախատեսվում է այս գազատարով տարեկան կես միլիարդ խորանարդ մետր բնական գազ ուղղել ՆԻՀ: Ադրբեջանական բնական գազն Իգդիրի վրայով կհասնի Նախիջեւան, ինչի արդյունքում «Իգդիր–Նախիջեւան» գազատարը կմիանա Բաբու–Թբիլիսի–Էրզրում գազատարին:

Այստեղ չպետք է մոռանալ, որ 2005 թվականի դեկտեմբերից ադրբեջանական գազը ՆԻՀ է հասնում Իրանի տարածքով: Փոխարենը, Ադրբեջանը սահմանամերձ Աստարա քաղաքի միջոցով գազ է հատկացնում Իրանի հյուսիսարեւելյան շրջաններին, որոնք հեռու են գտնվում իրանական հիմնական գազացանցերից:

Պետք է նշել, որ «Իգդիր–Նախիջեւան» գազամուղի կառուցումը տարօրինակ է այն առումով, որ կարծես թե դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ ՆԻՀ-ը ներկայումս գազի խնդիր չունի: Դրա համար էլ «Իգդիր–Նախիջեւան» գազատարի կառուցումը պետք է դիտարկել տվյալ տարածաշրջանում թուրք-իրանական հակասությունների տեսանկյունից:

## **Թուրք-իրանական հակասությունները Նախիջեւանում**

Թուրքիան ձգտում է ամեն գնով ընդդիմանալ ՆԻՅ-ում Իրանի ազդեցության մեծացմանը եւ նվազեցնել ՆԻՅ-ի տարանցիկ կախվածությունն Իրանից: Թուրքիան ակնհայտ զայրույթով է նայում Նախիջեւանում Իրանի ակտիվությանը՝ հենվելով 1921 թվականի Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի պայմանների վրա, ուր նա ճանաչվել է որպես Նախիջեւանի կարգավիճակի երաշխավոր: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՆԻՅ-ը, ի տարբերություն Թուրքիայի հետ ունեցած փոքր սահմանին, Իրանի հետ ունի 200 կիլոմետրանոց սահման, ինչը քիչ ավելին է, քան Հայաստանի հետ սահմանը: ՆԻՅ-ի տարածքը վերածվել է թուրքական եւ իրանական հատուկ ծառայությունների պայքարի գոտու:

Իր հերթին, Իրանը լուրջ աշխատանքներ է տանում Նախիջեւանում՝ նպատակ հետապնդելով այն առավելագույնս կտրել Ադրբեջանից եւ Թուրքիայից: Իրանն իրականացնում է մշակութա-կրոնական ենթակառուցվածքների լայն զարգացում, կրթական ծրագրեր, պատրաստում է տեղական կադրեր, որոնք նվիրված են ոչ միայն շիական արժեքներին եւ գաղափարներին, այլեւ իրանական պետությանը: 2001 թվականին Իրանի եւ Նախիջեւանի ղեկավարությունների միջեւ կնքված պայմանագրի համաձայն, Նախիջեւանի հեռուստատեսությունում պետք է պատրաստվեր պարսկերենով ծրագրերի փաթեթ, ինչը նշանակում է, որ Իրանը զարկ է տալիս Նախիջեւանում շիականության ու պարսկերենի տարածմանը: Բացի այդ, Իրանում տպագրվող շատ թերթեր մեծ տպաքանակով ցրվում են հիմնականում Շարուր եւ Սադարակ քաղաքներում:

«Իրան-Նախիջեւան» գազամուղի կառուցումը, Ջուլֆայում ազատ առևտրային գոտու ստեղծումը, Նախիջեւանի բնակչության՝ Իրան ներթափանցման հեշտացումը, Իրանի տարածքում հազարավոր նախիջեւանցիների կրթություն եւ բժշկական օգնություն ստանալու հնարավորությունը հանգեցնում են մարզի ինտեգրմանն Իրանին: 2005 թվականին Թուրքիան Իրանին առաջարկեց փակ համաձայնագիր կնքել Նախիջեւանում աշխատանքներ տանելու կանոնների մշակման ուղղությամբ, սակայն Իրանը կտրուկ մերժեց դա՝ ելնելով նրանից, որ Նախիջեւանը պատկանում է Ադրբեջանին:

Թուրքական կողմին հատկապես մտահոգում է Նախիջեւանում բնակվող քրդերին իրանական աջակցության հարցը: Այդ կապակցությամբ նա նշում է, որ Իրանն իր տարածքում բնակվող քրդական ցեղերին պլա-

նաչափորեն բնակեցնում է Նախիջեւանին սահմանակից հյուսիսարեւմտյան շրջաններում: Թուրքիային (նաեւ Ադրբեջանին) անհանգստացնում է նաեւ վերջին տարիներին Նախիջեւանում աստիճանաբար մեծացող քրդերի թվաքանակը, քանի որ դրանք Իրանից Նախիջեւան, ապա նաեւ Թուրքիա են փոխադրում թմրանյութեր, ինչպես նաեւ զբաղվում են Թուրքիայի դեմ ահաբեկչական գործողություններով: Թուրքական կողմը դժգոհ է նաեւ նրանից, որ Քրդական բանվորական կուսակցությանը (ՔԲԿ) համակրող անձանց կողմից Նախիջեւանի պետական համալսարանում անցկացվում են քրդերի պատմության դասընթացներ:

Փաստորեն, Թուրքիան եւ Իրանը Նախիջեւանը դիտարկում են ոչ թե որպես Ադրբեջանի մի մաս, այլ՝ որպես չեզոք կամ նրանից անջատ փակ գոտի, որը հավասարապես մոտ է ընկած այդ երկու երկրներին: Դրա պատճառն այն է, որ ներկայումս ձեւականորեն Նախիջեւանի երաշխավոր հանդիսացող Ադրբեջանի Չանրապետությունն իրական հնարավորություններ չունի վերահսկելու այդ տարածքը:

**ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ**  
*Արտաշես Տեր-Հարությունյան*

Թուրք-իսրայելական հարաբերությունները թեւակոխում են նոր փուլ, եւ մայիսի 31-ին թուրքական MV Mavi Marmara նավում տեղի ունեցած միջադեպն ու դրան հաջորդած զարգացումներն ասվածի հերթական վկայությունն են:

Միաժամանակ, ձեւավորվող թուրք-իսրայելական հակասությունները բոլոր հիմքերն ունեն դառնալու մերձավորարեւելյան քաղաքականության առանցքային հարցերից մեկը:

Հայաստանի պարագայում, նկատի ունենալով նաեւ Թուրքիայի տեղը մեր երկրի արտաքին քաղաքականության մեջ, կարելու էն դառնում հետեւյալ երեք հարցերի պատասխանները.

❖ թուրք-իսրայելական հարաբերությունների փոփոխությունն ընթացքի մեջ է, այն դեռ չի ստացել իր ավարտուն տեսքը, եւ նկատի ունենալով ընթացող դինամիկայի բացասական բնույթը՝ հարց է առաջանում. ինչքա՞ն են սրվելու այդ հարաբերությունները,

❖ մինչ այս միջադեպը թուրք-իսրայելական հարաբերությունները լարվում էին գերազանցապես Անկարայի նախաձեռնությամբ, սակայն MV Mavi Marmara նավի հետ տեղի ունեցածը ցույց տվեց, որ Թել Ավիվում որոշել են փոխել կեցվածքը: Հարց է առաջանում. եթե Իսրայելը որոշել է հետայսու անպատասխան չթողնել թուրքական նախաձեռնությունները, ինչքա՞ն հեռու են պատրաստ գնալու Թել Ավիվում,

❖ Հայկական հարցն այն սակավաթիվ գործոններից է, որը զսպող նշանակություն ունի Թուրքիայի համար. հետեւաբար՝ թուրք-իսրայելական սրվող հակասությունների ֆոնին համաշխարհային հրեական վերնախավն ի՞նչ չափով է պատրաստ նպաստել Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչմանը, եւ այդ համատեքստում ի՞նչ առաջարկություն կարվի երեւանին:

**Իրավիճակային դիտարկում**

Ինչպես հայտնի է, մայիսի 31-ի վաղ ժամերին իսրայելական ռազմածովային ուժերի Shayetet հատուկ նշանակության ջոկատը Միջերկրականի միջազգային ջրերում գրոհով գրավեց Free Gaza անունը

ստացած նավատորմի առաջնորդող նավը՝ թուրքական MV Mavi Marmara-ն<sup>1</sup>՝ կանգնեցնելով Free Gaza-ի ընթացքը դեպի Գազայի հատված:

Դեպքի հենց հաջորդ օրն իսրայելական ու ամերիկյան մի շարք աղբյուրներ գրեցին, թե Free Gaza նավատորմը ֆինանսավորած թուրքական Կնսան Հակ և Հուրիյեթերի Կնսանի Կարմիր Վակի («Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների աջակցությանը միտված հումանիտար հետազոտական հիմնադրամ») ոչ կառավարական կազմակերպությունն իր հիմնական ֆինանսական միջոցները ստանում է Թուրքիայի իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունից (ԱԶԿ) եւ, փաստորեն, հանդիսանում է նրա մասնաճյուղը: Նույն աղբյուրների փոխանցմամբ, օրինակ, պաղեստինյան «Համաս» խմբավորման հետ ԱԶԿ-ն նախնական կապերը հաստատել է հենց նշված կազմակերպության միջոցով, եւ այդ առումով պատահական չէ, որ Թուրքիա «Համասի» առաջնորդների յուրաքանչյուր այցի ժամանակ հանդիպում է տեղի ունենում նաեւ այս կազմակերպության ղեկավարների հետ:

Չնայած միջադեպից ժամեր անց եւ հետագա մի քանի օրերին վարչապետ Էրդողանի գլխավորությամբ թուրքական պետական, քաղաքական, հասարակական ու կրոնական մի շարք բարձրաստիճան գործիչներ հանդես եկան Իսրայելի սուր քննադատությամբ՝ վերջինիս բնութագրելով որպես ահաբեկիչ, ավազակ, միջազգային իրավունքները խախտող պետություն, սակայն ամենից դիպուկը, թերեւս, արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի խոսքերն էին, որը MV Mavi Marmara-ում տեղի ունեցածը բնորոշեց որպես «թուրքական սեպտեմբերի 11»:

Նման կարգի հայտարարությունը հստակորեն միտված էր ցույց տալու Անկարայի նպատակը՝ նոր մակարդակ բարձրացնել լարվածությունը Թեւ Ավիվի հետ: Օրինակ, եթե թուրք-իսրայելական նախկին սրացումների ժամանակ Թեւ Ավիվի նկատմամբ Անկարայի դիվանագիտական ճնշումը կրում էր միայն երկկողմանի բնույթ<sup>2</sup>, ապա այս անգամ Թուրքիայի պահանջով ՄԱԿ Անվտանգության խորհուրդը գումարեց արտահերթ նիստ՝ քննարկելու MV Mavi Marmara-ի հետ կապված միջադեպը: Չնայած, ԱՄՆ-ի շնորհիվ Անվտանգության խորհրդի բանաձեւը զգալիորեն մեղմացվեց եւ թուրքական շատ առաջարկներ (օրինակ, Իսրայելի գործողություններին գնահատական տալը, զոհվածների ընտանիքներին ֆինանսապես փոխհատուցելը եւ այլն) դուրս մնացին, բայց փաստն այն է, որ Թուրքիան նախաձեռնեց միջազգային այդ ամենահեղինակավոր կառույցի կողմից հրեական պետության գործողությունների դատապարտումը:

Տեղեկատվական առումով Անկարայի գործողությունները նույնպես կրում էին աննախադեպ բնույթ: MV Mavi Marmara-ում էին գտնվում CNNTurk-ի, կատարյան Al Jazeera-ի և բրիտանական Sky News-ի լրագրողները, և հենց նրանց շնորհիվ էր, որ ի սկզբանե տարածվեց 15-19 սպանվածների մասին տեղեկությունը<sup>3</sup>: Նրանց հղում տալով՝ ուղիղ հեռարձակումներ սկսեցին կազմակերպել CNN-ը և EuroNews-ը<sup>4</sup>, ինչի արդյունքում էլ կարճ ժամանակ անց միջազգային տեղեկատվական դաշտում միջադեպի լուսաբանումը զբաղեցրեց առաջին տեղը և օրեր շարունակ չէր կորցնում ակտուալությունը:

Թուրք-իսրայելական այս լարվածության մյուս կարեւոր նորությունն իսրայելական կողմի ձեռնարկած գործողություններն էին: Դեռ մինչև միջադեպը՝ մայիսի 27-ին, Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն կոչ արեց Իսրայելին խոչընդոտներ չստեղծել Free Gaza նավատորմի համար: Այս փաստն ուշագրավ է այն առումով, որ հստակորեն ցույց է տալիս, թե մինչև միջադեպը Անկարան ու Թել Ավիվը հարցի առնչությամբ գտնվել են կապի մեջ: Բայց դա չխանգարեց հրեական պետությանը կանգնեցնել Free Gaza-ի ընթացքը զոհերի գնով, չնայած, ինչպես արդարացիորեն նշում են շատ դիտորդներ, Իսրայելը դա կարող էր անել նաև առանց զոհերի: Հետևաբար, պարզ է դառնում, որ Իսրայելում որոշել էին հենց կոշտ կերպով պատասխանել թուրքական կողմին:

### **Հետևություններ**

Ձեռնարկելով Free Gaza-ի հետ կապված ողջ այդ գործողությունը՝ Թուրքիան խնդիր ուներ հասնել միջազգային քաղաքական ու ներքին քաղաքական մի շարք նպատակների:

Հատկապես մայիսի 17-ից հետո, երբ Թուրքիան Բրազիլիայի հետ հաջողացրեց Իրանի միջուկային ծրագրի շուրջ հասնել հայտնի համաձայնությանը, Free Gaza-ին առնչվող Անկարայի դիվանագիտական ու տեղեկատվական նախաձեռնությունները նպատակ ունեին բարձրացնել վերջինիս հեղինակությունը թե՛ միջազգային ասպարեզում և թե՛ հատկապես մահմեդական աշխարհում: Դատելով իրանական ղեկավարության որոշումից՝ հումանիտար օգնությամբ բեռնված երկու նավ ուղարկել Գազա, որոնք նույնպես պետք է փորձեն ճեղքել իսրայելական շրջափակումը, Անկարային, ըստ ամենայնի, հաջողվում է հասնել այդ նպատակին, այլապես իրանական կողմը չէր ցուցաբերի անհանգստության նման նշաններ:



Ասվածի հաջորդ ուշագրավ վկայությունը կարող է համարվել այն, որ ըստ իսրայելական աղբյուրների՝ ներկայում թուրքիան լուրջ ջանքեր է գործադրում հաշտեցնելու պաղեստինյան երկու խմբավորումներին՝ «Ֆաթհին» ու «Համասին», եւ եթե դա Անկարային հաջողվի, ապա կարելի կլինի խոսել Պաղեստինում թուրքական ազդեցության ներթափանցման մասին, ինչն իր հեթին նշանակում է իսլամական աշխարհի գործերում թուրքիայի դերի հերթական բարձրացում:

Free Gaza-ի հետ կապված էրդողանի կառավարության հաջորդ նպատակը պետք է կապել թուրքիայում ընթացող ներքաղաքական զարգացումների հետ: Հայտնի են ԱԶԿ–թուրքական բանակ հակասությունները, որոնք ժամանակ առ ժամանակ սրվում են թուրքիայի զինված ուժերի կողմից իբր կազմակերպված ամենատարբեր հեղաշրջումների բացահայտման արդյունքում: 2011թ. թուրքիայում խորհրդարանական ընտրություններ են, եւ Free Gaza-ի պատմությունը միայն նպաստեց իշխող ԱԶԿ-ի վարկանիշի աճին:

Ներկայացվածում հիմնական նորությունը, սակայն, Իսրայելի դեկավարության որոշումն էր՝ պատասխանել թուրքիայի նշված նախաձեռնությանը: Թուրք-իսրայելական նախորդ սրացումների ժամանակ Թել Ավիվը համենատաքար մեղմ էր արձագանքում, սակայն այս անգամ ոչ միայն պատասխան տրվեց, այլեւ Իսրայելի կողմից ձեռնարկված հետագա, այդ թվում՝ տեղեկատվական բնույթի քայլերը<sup>5</sup> ցույց տվեցին, որ Թել Ավիվում որոշում է կայացվել անցնել «կարմիր գիծը»:

Եթե դա այդպես է, ապա պետք է ավելի լուրջ մոտենալ Միջերկրականի ափին ու Սիրիայի սահմանին գտնվող թուրքական Իսկենդերուն քաղաքի մոտ այդ երկրի ռազմակայաններից մեկի նկատմամբ քուրդ զինյալների ձեռնարկած հարձակման փաստին: Հայտնի է, որ MV Mavi Marmara-ի միջադեպի հետ գրեթե միաժամանակ տեղի ունեցած այդ հարձակման հետեւանքով զոհվեց 6 թուրք բանակային եւ 9-ը վիրավորվեց: Հունիսի 4-ին թուրքական «Չամանը» գրեց, թե թուրքիայի անվտանգության մարմինները հատուկ հետաքննություն են սկսել պարզելու իսրայելական «Մոսադի» կապը միջադեպի հետ: Նշված տեղեկությունն էլ ավելի ուշագրավ դարձավ, երբ հունիսի 7-ին իսրայելական հետախուզական հանրության հետ իր կապերով հայտնի Debka վեբ-կայքը գրեց, թե դեռեւս մայիսի կեսերին թուրքիան Իսկենդերունի մոտ էր տեղափոխել հակաօդային պաշտպանության միավորումներ, որոնք պետք է աջակցություն ցուցաբերեն Սիրիային եւ Լիբանանում գործող «Հիզբալլահին»՝ Իսրայելի հետ հերթական հակամարտության ժամանակ:

---

<sup>1</sup> MV Mavi Marmara-ից բացի, նավատորմը բաղկացած էր եւս հինգ նավից՝ Challenger 1, MS Sofia, Sfendoni, Defne Y, Gazze:

<sup>2</sup> Այս անգամ էլ Թուրքիան հայտարարեց Իսրայելից իր դեսպանին հետ կանչելու մասին, չեղյալ հայտարարվեցին առաջիկայում կայանալիք թուրք-իսրայելական երեք զորավարժություններ, էրդողանը խոսեց տնտեսական կապերի թուլացման մասին:

<sup>3</sup> Իրականում, սպանվածների թիվը ինն էր:

<sup>4</sup> Հիշեցնենք, որ այս տարի ավելի վաղ Թուրքիան դարձավ EuroNews-ի չորրորդ խոշոր բաժնետերը:

<sup>5</sup> Օրինակ, կարելի է առանձնացնել իսրայելցի ուսանողների կողմից Թուրքիայի հարավարեւելյան շրջաններում բնակվող քրդերի համար հումանիտար օգնության քարավանի կազմակերպումը:

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆԵՌՕՍՄԱՆԻՉՄԻ ԱՐԴԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### *Արաքս Փաշայան*

2002թ. գալով իշխանության՝ Թուրքիայի իսլամամետ Արդարություն եւ զարգացում կուսակցությունը որոշակի փոփոխություններ մտցրեց երկրի արտաքին քաղաքականության միջինարեւելյան կամ իսլամական ուղղության մեջ: Մինչ այդ երկրի արտաքին քաղաքականությունը հենվում էր քեմալականության սկզբունքի վրա, ինչը նշանակում էր խզել կապն օսմանյան անցյալի հետ՝ հօգուտ Արեւմուտքի հետ մերձեցման:

Այսօր արդեն թուրքական վերնախավում գոյություն ունեն տարբեր տեսլականներ Թուրքիայի արտաքին քաղաքականության ապագայի հարցում: Դրանցից են թուրքական եվրասիականությունը, նեոպանթուրքիզմը եւ, վերջապես, նեոօսմանիզմը, ինչը նկատի է առնում արդի Թուրքիան՝ որպես Օսմանյան կայսրության ժառանգորդ: Ըստ այդմ՝ Թուրքիան, որին տարածաշրջանի երկրների հետ միավորում է ընդհանուր պատմական անցյալն ու կրոնը, ձգտելու է ինտեգրացիոն քաղաքականության միջոցով իր ազդեցությունն ընդլայնել Միջին Արեւելքում:

Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր ուղեգծի շրջանակներում առաջին հերթին վերանայվեցին հարաբերություններն Իրանի եւ արաբական երկրների հետ. այդ հարաբերություններն աննախադեպ վերելք ապրեցին՝ թեւակոխելով համագործակցության ամենաբարձր մակարդակը: Թուրքիան, ըստ էության, հանդես եկավ միջինարեւելյան տարածաշրջանի ամենահանգուցային եւ առաջատար պետությունը դառնալու հավակնությամբ, որի ապացույցը մի կողմից՝ մերձավորարեւելյան հակամարտություններում եւ տարածաշրջանային նշանակություն ունեցող հիմնահարցերում, մյուս կողմից՝ Արեւմուտքի եւ իսլամական առանձին ուժային կենտրոնների միջեւ բարդ եւ փխրուն հարաբերություններում միջնորդ դառնալու նրա՝ որոշակիորեն հաջողված նախաձեռնություններն էին:

Արաբական աշխարհի (Սիրիա, Իրաք, Յորդանան, Լիբանան, Եգիպտոս, Սաուդյան Արաբիա, Ծոցի երկրներ, Լիբիա, Պաղեստինյան ինքնավարություն եւ այլն) հետ Թուրքիայի համագործակցության սերտացումը, ինչպես եւ կանխատեսելի էր, իրականություն դարձավ Իսրայելի հետ հարաբերությունների նահանջի եւ որոշակի սառեցման,

պաղեստինյան հարցում Իսրայելին ուղղված կոշտ քննադատության եւ պաղեստինամետ դիրքորոշման շնորհիվ միայն:

Պատահական չէ, որ Թուրքիան արաբական աշխարհում սկսեց իրականացնել նաեւ ակտիվ տեղեկատվական քարոզչություն, որի նպատակը Թուրքիայի նոր կերպն է ցույց դնելն էր: Ասվածի ապացույցն է վերջերս թուրքական TRT հեռուստաալիքի արաբական թողարկումը (TRT Al-Turkiyye), որն ամփոփված է տարաբնույթ ծրագրերով (տեղեկատվական, սպորտային, մշակութային եւ այլն): Եվ չնայած վերջինիս համեստ տեխնիկական եւ այլ կարգի հնարավորություններին (եթե համեմատելու լինենք նույն BBC-ի, Russia Today-ի, French 24-ի արաբական հեռուստաալիքների հետ), այն բավական կարճ ժամանակամիջոցում մեծ ճանաչում ունեցավ արաբական աշխարհում: Իսկ Թուրքիայի վարկանիշի աճն ուղիղ համեմատական է ընդգծված հակաիսրայելական շեշտադրումների, պաղեստինյան սյուժեով նկարահանված առանձին ֆիլմերի (որոնց մեջ ի ցույց են դրված Իսրայելի դաժանությունները պաղեստինցիների նկատմամբ) եւ իր դերի արժեւորմանն ուղղված քարոզչական այլ միջոցների շնորհիվ:

Այս առումով, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում արաբական հասարակական տարբեր շրջանակներում Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր դերակատարության մասին առկա ընկալումները, որոնք, ի դեպ, միանշանակ չեն:

Այդ դաշտում, ընդհանուր առմամբ, կա հիմնականում երկու մոտեցում, որից առաջինը, Թուրքիայի նոր դերին գնահատական տալու հարցում, առավել զգուշավոր է եւ որոշակի վտանգ է տեսնում նեոսամախիզմից: Նման մոտեցման ձեւավորման հարցում ոչ պակաս կարեւոր է 20-րդ դարի արաբական պատմագրության այն հատվածի ազդեցությունը, որը բացասական գնահատական է տվել արաբական երկրամասերում մոտ չորս դար տեւած Օսմանյան տիրապետությանը՝ բնութագրելով այն որպէս արաբների քաղաքական, սոցիալական, գիտական եւ մշակութային անլուծյան շրջան, որն արդեն 19-րդ դարի կեսերին սպառնում էր արաբների ինքնության անկմանը: Օսմանյան տիրապետության վերաբերյալ նորագույն շրջանի արաբ պատմագրության բացասական գնահատականն էլ ավելի էր խորացնում Արեւմուտքի, նաեւ Իսրայելի հետ Թուրքիայի ռազմավարական սերտ համագործակցությունը, որի բարձրակետը 1996-ին Իսրայելի եւ Թուրքիայի միջեւ ռազմավարական համագործակցության մասին պայմանագիրն էր:

Նեոսամախիզմից վտանգ տեսնողների համար Թուրքիան, որ չնայած եռանդուն ձեւով հանդես է գալիս ի պաշտպանություն պաղեստինցիների շահերի, անկեղծ չէ: Այդ իսկ պատճառով արաբները չպետք է կորցնեն

իրենց զգոնությունը եւ պատմական հիշողությունը: Նեոսոսնահիզմի վերաբերյալ հենց նման մի տեսակետ է հայտնում արաբական «Ալ-Յավադիս» ամսագրի 2009-ի մի հրապարակում, որտեղ պատկերված է վարչապետ Էրդողանը թուրքական-իսլամական տյուրքանով:

Ըստ հողվածագրի՝ Թուրքիան անկեղծ չէ, այլապես կճանաչեր այն ոճրագործությունները, որ կատարվել են Օսմանյան կայսրության շրջանում նույն հայերի եւ ասորիների նկատմամբ: Միեւնույն ժամանակ, անկեղծ չեն հրեաների հետ հարաբերությունները վերանայելու Թուրքիայի հավաստիացումները, քանի որ այդ երկու ուժերը մշտապես գործել են համատեղ, հատկապես, երբ խոսքը վերաբերել է ջարդերին: Յենց թուրքերի եւ հրեաների համատեղ ուժերով են ոչնչացվել 2 միլիոն հայեր:

Հողվածում նեոսոսնահիզմի կամ օսմանյան վերածննդի դրսեւորում են համարվում Միջին Արեւելքում, Բալկաններում, Կովկասում քաղաքական խնդիրների կարգավորմանը միջամտելու, սեփական համայնքների միջոցով Եվրոպա ներթափանցելու Թուրքիայի գործողությունները եւ, վերջապես, արաբների նկատմամբ աննախադեպ, լիբերալ վերաբերմունքը: Տարաբնույթ փաստերի հիման վրա հողվածագիրը փորձում է ապացուցել, որ Թուրքիայի քաղաքականությունը հակախորայելական չէ, եւ որ Թուրքիայի ներկա դիրքորոշումը, միեւնույն է, ոչինչ չի կարող փոխել պաղեստինյան հարցում, առավել եւս, որ Թուրքիային հետաքրքրում է ոչ թե Ղազան, այլ՝ տարածաշրջանում սեփական դիրքերի ամրապնդումը եւ տեղում դոփող տնտեսության հզորացումը: «Միամտություն է Թուրքիայի հարաբերություններն արաբների հետ համարել բեկման սկիզբ, համարել, որ թուրքերը փոխվել են»:

Բավական դրական եւ արաբական աշխարհի համար շահեկան է դիտվում տարածաշրջանում Թուրքիայի ակտիվ եւ խաղաղասիրական դերակատարության վերաբերյալ արաբական հասարակական շրջանակներում առկա մյուս տեսակետը: Նման փաստարկման համար հիմք է ծառայում Թուրքիայի հզոր տնտեսության հանգամանքը, ինչպես նաեւ դեմոկրատիայի, մասնավորապես՝ իսլամի եւ ժողովրդավարության համակեցության հարցում առկա փորձառությունը, ինչը հաջողվել է իրականություն դարձնել Թուրքիայում ԱԶԿ-ի իշխանությանը:

Դրական է համարվում թուրքերի հետ Օսմանյան կայսրության շրջանում համատեղ պատմություն ունենալու իրողությունը, կայսրության դրական ազդեցությունն արաբական աշխարհում (օրինակ՝ ճարտարապետության ոլորտում), նշվում է, որ օսմանյան մշակույթի, նաեւ՝ օսմանյան շրջանում ձեւավորված սոցիալական եւ իրավական ինստիտուտների ազդեցությունն արաբական աշխարհում մինչեւ օրս էլ զգացվում է:

Այս տեսանկյունից, մեծապես արժեւորվում է սուլթան Աբդուլ Չամիդի (1876-1909) քաղաքականությունը Պաղեստինում, երբ վերջինս թույլ չտվեց սիոնիստներին (մասնավորապես՝ Թեոդոր Յերցելին)՝ հրեաներով վերաբնակեցնել այդ երկրամասը: Բացի այդ, Թուրքիան դիտարկվում է իբրեւ մի պետություն, որը կարող է հավասարակշռող դեր խաղալ տարածաշրջանում, եւ որ նրա քայլերն՝ ի պաշտպանություն Պաղեստինի, շատ ավելի համարձակ են, քան շատուշատ արաբական կառավարությունների գործողությունները, որոնք համարժեքորեն չեն կարողանում արձագանքել այն մարտահրավերներին, որոնք ուղղված են արաբական աշխարհի դեմ:

Թուրքիայի վարկանիշն արաբական աշխարհում զգալի վերելք ապրեց 2010-ի մայիսի 31-ին Միջերկրականի ջրերով դեպի Ղազայի հատված հումանիտար օգնություն տանող «Ազատության նավախմբի» դեմ Իսրայելի իրականացրած ռազմական գործողություններից հետո, որի հետեւանքով մահացան թուրք ակտիվիստներ: Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ հերթական, սակայն իր տեսակի մեջ աննախադեպ լարվածությունը մեծ արձագանք գտավ Միջին Արեւելքում, այդ թվում՝ արաբական աշխարհում, ինչպես նաեւ Եվրոպայի մուսուլմանական համայնքներում: Արաբական գրեթե բոլոր երկրները բավական կոշտ քննադատեցին Իսրայելին: Թեման լայն արձագանք գտավ արաբական մամուլում, որի հրատարակած հոդվածներում միմյանց հակադրվում էին թուրքական մարդասիրությունն ու Իսրայելի իրականացրած պետական ահաբեկչությունը: Արաբական մի շարք երկրներում, այդ թվում՝ Սիրիայում, Չորդանանում, Լիբանանում, Եգիպտոսում, Պաղեստինյան ինքնավարությունում եւ այլուր, տեղի ունեցան բողոքի ակցիաներ, որոնցում, շատ դեպքերում, ծածանվում էր ոչ միայն Պաղեստինի, այլեւ՝ Թուրքիայի դրոշը:

Ղազայից մոտ 65 կիլոմետր հեռավորության վրա տեղի ունեցած միջադեպը, ինչը, շատ հետազոտողների կարծիքով, հրահրված էր Թուրքիայի կողմից, ոչ միայն զգալի լիցքեր հաղորդեց պաղեստինյան շարժմանը, այլ նաեւ՝ հակազլոբալիստական հռետորականությանը (որի կարելու էր քաղաքիչներից են հակաիսրայելականությունն ու հակաարեւմտականությունը)՝ այդ կերպ, թերեւս կարճաժամկետ, համախմբելով իսլամական հանրությանը: Խնդիրն այն է, որ մինչ օրս արաբական աշխարհի ջանքերն այնքան էլ կենսունակ չեն եղել՝ կարգավորելու արաբ-իսրայելական, այդ թվում՝ պաղեստինյան խնդիրը:

Մյուս կողմից, նշված միջադեպը որոշակիորեն կոշտացրեց արաբական աշխարհի դիրքորոշումն Իսրայելի նկատմամբ: Ասվածի ապացույցը

ս.թ. հունիսի 2-ին Կահիրեում Արաբական պետությունների լիգայի արտաքին գործերի նախարարների արտահերթ հանդիպումն էր, որտեղ բարձր գնահատվեցին Թուրքիայի ջանքերը: Հանդիպմանն ընդունված հայտարարության մեջ նշված է, որ արաբական պետությունները պետք է հրաժարվեն Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ցանկացած քայլից: Բացի այդ, որոշվեց ճեղքել Ղազայի շրջափակումը: Մասնավորապես, Եգիպտոսն, ի պատասխան իսրայելական գործողությունների եւ, անշուշտ, հանուն սեփական հեղինակության, ժամանակավորապես բացեց Ռաֆահի անցակետը, որի նպատակներից մեկը Ղազայի շրջան մարդասիրական օգնություն փոխադրելն է:

«Ծովային պատերազմը» ծանրակշիռ կռվաններ բերեց Թուրքիային, եւ անկախ այն հանգամանքից, թե որքանով Թուրքիան կվճարի Իսրայելի հետ ունեցած իր խորքային հարաբերությունները, այդ երկրի հանդեպ որդեգրած իր ներկա կոշտ մոտեցումը բավական է, որպեսզի «արաբական փողոցն» այլեւս լեգիտիմացնի Թուրքիային՝ որպես ունմայի եւ հակա-իսրայելական ճամբարի անդամ: Նշված իրողությունները Թուրքիային, ըստ էության, հնարավորություն կտան հանգուցային տեղ գրավել Միջին Արեւելքում: Եվ չնայած առանձին ուժային կենտրոնների (մասնավորապես՝ Իրան, Սաուդյան Արաբիա–Եգիպտոս, Կատար եւ այլն)՝ այս հարցում մրցակցությանը, Թուրքիայի հնարավորությունները, թերեւս, ավելի մեծ են՝ լրացնելու առկա բացը:

Ներկայումս, նկատի ունենալով Թուրքիայի վերաբերյալ առկա դիրքորոշումն Արաբական պետությունների լիգայի, առանձին արաբական կառավարությունների եւ արաբական հասարակությունների շրջանում, կարելի է պնդել, որ առաջիկայում Թուրքիան կշարունակի իր նոր քաղաքականությունը Միջին Արեւելքում՝ փորձելով արաբական իսլամական աշխարհում վերաճել ծանրակշիռ գործոնի:

## **ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՍԻԶՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ *Սեւակ Սարուխանյան***

Իրանը եւ նրա միջուկային ծրագիրը շարունակում են մնալ միջազգային հարաբերությունների եւ լրատվության ուշադրության կիզակետում:

Սույն թվականի մայիսի 17-ին Իրանի, Բրազիլիայի նախագահներն ու Թուրքիայի վարչապետը համաձայնության եկան Իրանի կողմից արտադրվող հարստացված ուրանի՝ երկրի տարածքից դուրս վերահարստացման մասին: 18 ժամ տեւած բանակցություններից հետո Իրանը համաձայնեց իր տարածքում ուրանը հարստացնել մինչեւ 3,5 տոկոս, այնուհետեւ այն Թուրքիայի տարածքում փոխանակել մինչեւ 20 տոկոս հարստացված ուրանի հետ, որը հետագայում պետք է օգտագործվի Թեհրանի միջուկային գիտահետազոտական կենտրոնում տեղակայված հետազոտական ռեակտորում:

Չնայած ձեռք բերված համաձայնությունը բանակցություններին մասնակցած երեք պետությունների կողմից բնորոշվեց որպես «հեղափոխական», սակայն արդեն մի քանի օր անց պարզ դարձավ, որ կնքված համաձայնագիրն ու Թեհրանի որդեգրած քաղաքականությունը հեռու են Իրանի միջուկային ծրագրի հանգուցալուծումն ապահովելուց:

Արդեն մայիսի 20-ին Իրանի արտաքին գործերի նախարար Մ.Սոթաքին հայտարարեց, որ ձեռք բերված պայմանավորվածությունը Թեհրանի «բարի կամքի արտահայտումն է» եւ բնավ չի նշանակում, թե իսլամական հանրապետությունը հրաժարվելու է ուրանը սեփական տարածքում հարստացնելու ծրագրերից: Հետո նա հավելեց. «Մեր որոշումն ուղղված է այն բանին, որ միջազգային հանրությանը ցույց տրվի, որ մենք բաց ենք պայմանավորվածությունների համար»:

Փաստորեն, ակնհայտ է, որ Իրանը չի հրաժարվելու ուրանի հարստացման համար անհրաժեշտ նոր հզորությունների կառուցման ծրագրերից, իսկ ստորագրված փաստաթուղթն օգտագործվելու է դիվանագիտական եւ տեղեկատվական, ինչպես նաեւ ժամանակ շահելու նպատակներով: Նման կարծիք է արտահայտել ԱՄՆ պետքարտուղար Ջ.Բլինթոնը մայիսի 28-ին. «Մենք մեր կարծիքը հայտնեցինք Բրազիլիայի նախագահին, ինչպես նաեւ իմ բրազիլացի գործընկերոջը. Իրանին ժամանակի եւ միջազգային հանրության միասնական գործողություններից



խուսափելու համար հնարավորությունների տրամադրումը ոչ թե բարելավում է իրավիճակն աշխարհում, այլ էլ ավելի վտանգավոր է դարձնում»:

Հատկանշական է, որ ԱՄՆ դիրքորոշմանը մոտ դիրքորոշում ունի նաև Ռուսաստանը, որի նախագահ Դ.Մեդվեդևը, դեռ մինչև Բրազիլիայի նախագահի այցն Իրան, նրա՝ իրանական իշխանությունների հետ համաձայնության գալու հնարավորությունը գնահատել էր «30 տոկոս»: Եվ չնայած համաձայնություն, այնուամենայնիվ, ձեռք բերվեց, Մոսկվան չիրաժարվեց պաշտպանել նոր պատժամիջոցների կիրառումը՝ կարծիք հայտնելով, որ միայն Թուրքիայի տարածքում ուրանի փոխանակումից հետո կարելի է խոսել Իրանի «նոր քաղաքականության» մասին:

Հունիսի 5-ին Գերմանիա կատարած այցի ժամանակ ՌԴ նախագահը հայտարարեց. «Մենք հույս ունենք, որ իրանական իշխանությունները կլսեն միջազգային հանրության ձայնը: Չի կարելի շարունակել եւ կրկնապատկել անպատասխանատու պահվածքը, պետք է լսել, թե ինչ են ասում, պետք է համագործակցել, եւ միայն այդ դեպքում է կարելի լուծել առկա խնդիրները»: Հարկ է նշել, որ Ռուսաստանի նախագահի հայտարարությունն ու դրա տոնը բավական խոսուն են. քննադատության է ենթարկվում ոչ թե միջուկային ծրագիրը, այլ իրանական իշխանությունը: Սա նոր երեւույթ է Ռուսաստանի «իրանական քաղաքականության» համար:

Ամենայն հավանականությամբ, ՌԴ նախագահ Դ.Մեդվեդևի հայտարարությունը պայմանավորված է նաև նրանով, որ Թեհրանը վերջին շրջանում ինքն է հնչեցնում բավական հակառուսական հայտարարություններ, որոնք մինչև վերջերս ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչության կողմից կոշտ գնահատականներ չեն ստացել: Վերջին շրջանի մեծ հայտարարություններից կարելի է նշել մի քանիսը:

Մայիսի 25-ին Ռուսաստանում Իրանի դեսպան Մ.Սաջադին, որն ի պաշտոնե պարտավոր է ավելի մեղմ գնահատականներ տալ Մոսկվայի քաղաքականությանը, քան իսլամական հանրապետության որեւէ այլ դիվանագետ, իր հրավիրած հատուկ մամլո ասուլիսում հայտարարեց, որ «վեցնյակը», որի անդամ է նաև Ռուսաստանը, «չար նպատակներով եւ քաղաքական ենթատեքստով է աշխատում»:

Իսկ Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադը իրանական պետական հեռուստատեսությամբ մայիսի 26-ի ելույթում ասաց, որ Մոսկվան երթարկվել է ԱՄՆ ճնշումներից, եւ այսօր Ռուսաստանը պետք է մտածի այն մասին, որ «չնտնի Իրանի պատմական թշնամիների շարքը»: Այս նպատակով Իրանի նախագահը խորհուրդ տվեց Ռուսաստանին (իսկ այս խորհուրդն ավելի շուտ հնչեց որպես սպառնալիք) փոխել դիրքորոշումը Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ:

Չնայած Ռուսաստանի ԱԳՆ դիրքորոշումը Մ.Ահմադինեժադի հայտարարության վերաբերյալ բավական մեղմ էր՝ «հավանաբար հայտարարությունը եղել է հուզական», ՌԴ նախագահի աշխատակազմը, ի դեմս Դ.Մեդվեդևի միջազգային քաղաքականության գծով օգնական Ս.Պրիխոդկոյի, միանգամայն այլ կոշտության պատասխան հնչեցրեց. «Ամբոխավարական քաղաքականությամբ սեփական հեղինակությունը պահել դեռ ոչ ոքի չի հաջողվել: Համոզված եմ, որ դրա մասին է վկայում հենց Իրանի հազարամյա պատմությունը»:

Միջազգային հանրության շրջանում Իրանի շուրջ կրքերի բորբոքմանը նպաստեց նաև հունիսի 1-ին «The New York Times»-ի և «ITAP-TACC»-ի հրապարակած տեղեկությունն այն մասին, որ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) Իրանի միջուկային ծրագրի մասին նոր հաշվետվություն-զեկույցի մեջ, որը ներկայացվել է ՄԱԿ ԱԽ անդամներին, նշվում է, թե Իրանն արդեն իսկ կուտակել է բավական քանակությամբ ուրան՝ 2 միջուկային ռումբ ստեղծելու համար: Համաձայն ԱԷՄԳ զեկույցի, այսօրվա դրությամբ Իրանն արդեն ունի 2,43 տոննա կուտակած ուրան՝ հունվարին արձանագրված 2,06 տոննայի փոխարեն: Այս թվից պարզ է դառնում, որ Իրանի ուրանի պահուստները բավական արագ աճում են՝ չնայած միջազգային ակտիվ ճնշմանը: Հունվարից մայիս ընկած ժամանակաընթացքում, ինչպես նշվում է զեկույցում, 3,936-ով կամ մոտ 50 տոկոսով ավելացել է նաև ԻԻՀ տարածքում տեղակայված ցենտրիֆուգների քանակը: Այս տեղեկություններին նոր սրություն հաղորդեց հունիսի 4-ին Իրանի փոխնախագահի հայտարարությունն այն մասին, որ մինչև 2011թ. տարեվերջ իր երկիրը նպատակ ունի եռապատկել ուրանի հարստացման համար տեղակայված ցենտրիֆուգների քանակը:

Թե որքանով են «The New York Times»-ի և «ITAP-TACC»-ի հրապարակած գնահատականները մոտ ԱԷՄԳ զեկույցում տրված գնահատականներին, վստահաբար ասել չի կարելի: Սակայն այն, որ դրանք սինքրոն ձեւով եւ միաժամանակ հրապարակվել են ռուսական եւ ամերիկյան տեղեկատվական հսկաների կողմից, կարող է խոսել կամ դրանց հավաստիության, կամ ռուս-ամերիկյան՝ իրանական հարցում միասնական քաղաքական գծի մասին: Ակնհայտ է, որ այսօր Ռուսաստանն Իրանի միջուկային հարցի վերաբերյալ շատ ավելի հեշտ կարող է փոխհամաձայնության ելած լինել ԱՄՆ-ի հետ, քան մի քանի տարի առաջ: Հիմնական պատճառ կարող է դիտվել Բ.Օբամայի վարչակազմի գրեթե վերջնական որոշումը՝ ռազմական գործություններ չսկսել Իրանի դեմ, անկախ նրանից, թե ինչ ճանապարհով կընթանա վերջինիս միջուկային ծրագիրը:

Այսօր կարելի է ասել, որ միջազգային հանրությունը բավական մոտ է Իրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառման որոշում ընդունելուն: Նման որոշման դեմ հանդես եկող Բրազիլիան եւ Թուրքիան դժվար թե կարողանան օգնել Իրանին խուսափել պատժամիջոցներից: Այս երկու պետություններն իրենց «իրանամետ» քաղաքականության մեջ հետապնդում են սեփական շահերը: Թուրքիան եւս մեկ քայլ է կատարում իսլամական աշխարհի շահերի պաշտպանի իր դիրքն ամրապնդելու ուղղությամբ, իսկ Անկարայի «հակախորայելականությունն» ու «իրանամետությունն» այս քաղաքականության մասն են կազմում: Բրազիլիան, ներքաշվելով իր համար որեւէ կարեւորություն չունեցող Իրանի միջուկային ծրագրի գլոբալ հնչեղություն ունեցող միջազգային հիմնախնդրի կարգավորման գործում, ամրապնդում է իր դիրքերը ՄԱԿ ԱԽ մշտական անդամ ընտրվելու գործընթացում: Այս տեսանկյունից թե՛ Թուրքիան, թե՛ Բրազիլիան կարող են անհրաժեշտության դեպքում «փոխհամաձայնության» գալ ԱՄՆ եւ ՄԱԿ ԱԽ այլ անդամների հետ՝ Թեհրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառման հարցում:

Ինչ վերաբերում է Իրանի հանդեպ պատժամիջոցներին ավանդաբար դեմ արտահայտվող Չինաստանին, ապա վերջինս այս անգամ, ամենայն հավանականությամբ, կպաշտպանի պատժամիջոցների կիրառումը: Այս մասին դեռեւս մայիսին գերմանական «Spiegel»-ին տված հարցազրույցում ասել է ԱՄՆ նախագահի խորհրդական Ջ.Բեյդերը: Վերջինս նշել է, որ իրանական հարցում ԱՄՆ-ը եւ Չինաստանը պայմանավորվել են «համատեղ աշխատել ու ընդհանուր որոշում ընդունել»:

Թե որքանով նոր պատժամիջոցներն արդյունավետ կլինեն, կարելի է երկար վերլուծել: Սակայն Իրանի միջուկային ծրագիրն արդեն իսկ մտել է ավարտական փուլ, երբ պարզ երեւում է միջուկային ռումբի մոտալուտ ստեղծման հեռանկարը: Իսկ Թեհրանի համար տնտեսական բնույթի ոչ մի պատժամիջոցի հետեւանք միջուկային ռումբի ձեռքբերումից ավելի կարեւոր լինել չի կարող:

## **ԻՐԱՆԻ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ**

### ***Վահրամ Հովյան***

Միջին Արեւելքի հայ բողոքական համայնքների շարքում իր ուրույն տեղն ունի Իրանի հայ բողոքական համայնքը, որի առաջացումը տեղի է ունեցել դեռեւս 19-րդ դարի կեսին:

Իրանը մերձավորարեւելյան այն երկրներից է, որը նախկինում չի եղել Օսմանյան կայսրության կազմում: Հետեւաբար, այստեղ հայ բողոքական համայնքի ձեւավորումը, ի տարբերություն մերձավորարեւելյան այլ երկրների (Թուրքիա, Սիրիա, Լիբանան), տեղի է ունեցել Օսմանյան կայսրությունում հայ բողոքական համայնքների ձեւավորման գործընթացից անկախ: Ավելին, եթե Օսմանյան կայսրությունում իշխանությունները հանդուրժում եւ ինչ-որ տեղ խրախուսում էին հայ բողոքական համայնքների ձեւավորումն ու ստվարացումը՝ Հայությանը պառակտելու նպատակով, ապա Իրանում իշխանությունները պայքարում էին այդ երեւույթի դեմ՝ այն համարելով արեւմտյան պետությունների համար հնարավորություն միջամտելու Իրանի ներքին գործերին:

Չնայած իշխանությունների դիմադրությանը՝ բողոքականությունը, այնուամենայնիվ, կարողացավ թափանցել Իրան եւ տարածում գտնել նաեւ տեղի Հայության շրջանում: Ներկայումս Իրանի հայ բողոքականները, տեղի Հայ առաքելական եւ կաթոլիկ համայնքների կողքին, հանդիսանում են իրանահայության դավանանքային շերտերից մեկը:

### **Թվաքանակը եւ սփռվածությունը**

Իրանում հայ բողոքականների թվաքանակը ժամանակի ընթացքում ենթարկվել է փոփոխությունների՝ կապված ընդհանուր Հայության թվաքանակի ավելացման կամ նվազման հետ: Այսպես, Հայոց ցեղասպանության արդյունքում Հայության թվաքանակի աճը Իրանում հանգեցրեց նաեւ հայ բողոքականների թվաքանակի աճին, քանի որ փրկված եւ Իրանում ապաստանած հայերի մեջ կային նաեւ բողոքականներ: Մինչեւ 1979թ. իսլամական հեղափոխությունը Հայության թվաքանակը Իրանում կազմում էր մոտ 300 հազ.: Հեղափոխությունից հետո տարաբնույթ գործոնների ազդեցությամբ իրանահայության շրջանում ծայր առավ արտագաղթը, որի արդյունքում վերջինիս թվաքանակը կրճատվեց մոտ կիսով չափ: Ընդհանուր իրանահայության թվաքանակի նվազումը չէր կարող

բացասաբար չանդրադառնալ նաեւ իրանահայ բողոքականության թվաքանակի վրա: Չնայած Իրանում 20-րդ դարի վերջից կրկին լայն թափ ստացած բողոքական միսիոներությանը՝ հայ բողոքականների թվաքանակը չի ավելանում, քանի որ միսիոներական գործունեությունն իրականացվում է հիմնականում մուսուլման բնակչության շրջանում:

Ներկայումս Իրանի հայ բողոքական համայնքի թվաքանակի որոշման հարցը իրանահայ բողոքականությանն առնչվող ամենաբարդ խնդիրն է: Բանն այն է, որ այդ հարցում վիճակագրությունը բավական խրթին է:

Առհասարակ, քրիստոնեական համայնքներն Իրանում բաժանվում են երկու հատվածի.

1. *Ազգային*, որն ընդգրկում է այն համայնքները, որոնք ձեւավորվել են ազգային սկզբունքի հիման վրա եւ ունեն ազգային բնութագիր: Դրանց թվում է նաեւ Հայ Առաքելական եկեղեցին:

2. *Ընդհանրական*, որը կազմում են այն համայնքները, որոնք աչքի են ընկնում էթնիկ բազմազանությամբ կամ ձեւավորված չեն ազգային սկզբունքի հիման վրա: Այդպիսի համայնք է բողոքականությունը: Վերջինիս շրջանում ներքին տարաբաժանումն արվում է լեզվական սկզբունքի հիման վրա: Ըստ այդմ՝ Իրանում բողոքականությունը կազմում են հիմնականում պարսկախոսները, հայախոսները եւ ասորախոսները:

Վիճակագրությունը տարբերակում չի դնում բողոքական համայնքի վերոհիշյալ լեզվական խմբերի միջեւ՝ նրանց դիտելով միեւնույն ամբողջության՝ բողոքական համայնքի մեջ: Համաձայն վիճակագրական տվյալների՝ բողոքական համայնքի թվաքանակը Իրանում կազմում է 8.5 հազ.: Թե նրանցից որքանն են հայ, վիճակագրությունը չի մանրամասնում: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ հայերը տեսակարար կշռով այդ հանրույթի շրջանակներում երկրորդն են պարսկախոսներից հետո, քանի որ.

1. Իրանում հայերն ընդհանրապես իրենց թվաքանակով անհամեմատ գիջում են պարսկախոսներին, սակայն գերազանցում են ասորախոսներին;

2. Միսիոներական գործունեությունն իրականացվում է հիմնականում Իրանի մուսուլման բնակչության շրջանում, որի հետեւանքով աստիճանաբար ավելանում է պարսկախոս բողոքականների թվաքանակը:

Իրանի հայ բողոքական համայնքն աշխարհագրորեն սփռված է հետեւյալ վայրերում՝ Թեհրան, Նոր Ջուղա, Թավրիզ, Արալ, Համադան: Նրա գերակշիռ մեծամասնությունը, այնուամենայնիվ, կենտրոնացված է մայրաքաղաք Թեհրանում: Այդ մասին վկայում են երկու հանգամանք.

1. Իրանահայության գերակշիռ մեծամասնությունը՝ մոտ 70%, կենտրոնացված է Թեհրանում:

2. Թեհրանում են կենտրոնացված հայ բողոքական կազմակերպչական կառույցները:

### **Կազմակերպչական կառույցները**

Իրանի հայ բողոքական համայնքի կազմակերպչական կառույցները թեև փոքրաթիվ են, սակայն տեսակային առումով աչքի են ընկնում բազմազանությամբ: Այստեղ էլ, բացի եկեղեցական կառույցներից, կան նաև կրթական, սոցիալական եւ այլ կառույցներ: Դրանք բոլորն էլ կենտրոնացված են մայրաքաղաք Թեհրանում:

Ըստ իրենց գործունեության ուղղվածության՝ Իրանի հայ բողոքական համայնքի կառույցները կարելի է բաժանել 5 մասի՝ ղեկավար, եկեղեցական, կրթական, սոցիալական եւ տեղեկատվական: Այդ կառույցներից ամենամեծաքանակը եկեղեցիներն են, որոնց թիվը երեքն է: Մյուս տեսակներից գործում է մեկական կառույց:

1. *Ղեկավար* կառույցը Իրանի Հայ ավետարանչական ընկերակցությունն է, որը Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության իրանական մասնաճյուղն է: Ընկերակցության նախագահն է վերապատվելի Սերգեյ Շահվերդյանը, որը միաժամանակ Իրանի Հայ ավետարանական Սուրբ Հովհաննես եւ Հոգեշունչ եկեղեցիների հոգեւոր հովիվն է:

2. *Եկեղեցական* կառույցներից ամենահինը Հայ ավետարանական Ս. Հովհաննես եկեղեցին է՝ հիմնված 1876թ.: Գործում են նաև Հայ ավետարանական Հոգեշունչ եւ Շնորհալի եկեղեցիները: Այն, որ Թեհրանի գործող Հայ ավետարանական երեք եկեղեցիներից երկուսը, ինչպես նաև ավետարանչական ընկերակցությունը ղեկավարում է միեւնույն անձը (վերապատվելի Սերգեյ Շահվերդյան), թույլ է տալիս ենթադրել, որ Իրանի Հայ ավետարանական համայնքում կա հոգեւոր գործիչների պակաս:

3. *Կրթական* միակ հաստատությունը Հայ ավետարանական Գոհար Մեսրոպյան դպրոցն է:

4. *Սոցիալական* միակ կառույցը Ավետարանչական այգի քրիստոնեական ճամբարն է:

5. *Տեղեկատվական* միակ հաստատությունը «Սուրհանդակ» եռամսյա հանդեսն է:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ կազմակերպչական կառույցների առումով Իրանի հայ բողոքական համայնքը Մերձավոր Արեւելքի այլ երկրների՝ Լիբանանի եւ Սիրիայի հայ բողոքական

համայնքների հետ ունի ինչպես ընդհանրություն, այնպես էլ տարբերություններ: Ընդհանրությունը կազմակերպչական կառույցների տեսակային բազմազանության մեջ է: Տարբերություններ կան երկու հարցում՝ կազմակերպչական կառույցների թվաքանակի եւ աշխարհագրական սփռվածության:

- *Թվաքանակի* առումով Իրանի հայ բողոքական կառույցները էապես գիշում են Լիբանանի եւ Սիրիայի հայ բողոքական կառույցներին:

- *Սփռվածության* տեսակետից, եթե Լիբանանի եւ Սիրիայի հայ բողոքական կառույցներն ունեն ավելի լայն աշխարհագրական ընդգրկում, ապա Իրանի հայ բողոքական կառույցները կենտրոնացված են մայրաքաղաք Թեհրանում:

### **Չայ բողոքական համայնքը իրանական միջավայրում**

Չիշյալ խնդիրն ունի երկու կողմ՝ նեղ եւ լայն.

- *Նեղ* առումով՝ քննարկվում է հայ բողոքական համայնքի դրությունը իրանահայության շրջանակներում:

- *Լայն* առումով՝ դիտարկվում են նրա փոխհարաբերությունները իրանական պետության եւ հասարակության հետ:

1. Իրանի հայ բողոքական համայնքը հիմնականում բնականոն հարաբերությունների մեջ է տեղի Չայ Առաքելական եւ Կաթոլիկ եկեղեցիների հետ: Առճակատման դեպքեր հայտնի չեն: Համայնքային կյանքում փոխհարաբերությունները կառուցվում են գործընկերության ոգով: Այն իր ակնառու դրսեւորումն ունի հատկապես կրթական բնագավառում՝ Չայ ավետարանական Գոհար Մեսրոպյան դպրոցի օրինակով. դպրոցում ուսում են ստանում ինչպես բողոքական, այնպես էլ առաքելական երեխաները:

2. Այլ է իրավիճակը պետության եւ իրանական հասարակության հետ հայ բողոքական համայնքի փոխհարաբերություններում, որին տրվող գնահատականը միանշանակ չի կարող լինել: Մի կողմից՝ Իրանի սահմանադրությամբ եւ օրենքներով երաշխավորվում են որոշակի իրավունքներ եւ ազատություններ կրոնական փոքրամասնությունների համար: Սակայն մյուս կողմից՝ առկա է իրանական պետության եւ հասարակության ընդգծված բացասական վերաբերմունքը բողոքականների եւ հատկապես նրանց միսիոներական գործունեության նկատմամբ: Բողոքականները Իրանում, ի տարբերություն այլ քրիստոնեական համայնքների, ընկալվում են որպես օտար տարր եւ գործիք արտաքին ուժերի ձեռքում:

Բողոքական միսիոներությունը, որն Իրանում սկիզբ է առել դեռևս 1830 թվականից, կրկին լայն թափ է առել վերջին տասնամյակներում:

Ակտիվորեն տեղի է ունենում Իրանի մուսուլման բնակչության քրիստոնեացման (բողոքականացման) գործընթաց, ինչն իր հերթին առաջացնում է պետության եւ մուսուլման մոլեռանդների հակազդեցությունը: Պետական մակարդակով միսիոներական գործունեությունն արգելված է, մահապատիժ է սահմանված կրոնափոխության համար: Ինչ վերաբերում է մոլեռանդ մուսուլմանների հակազդեցությանը, ապա այն դրսևորվում է հիմնականում բողոքականների նկատմամբ հարձակումների ու բռնությունների տեսքով:

Հնարավոր է, որ հայ բողոքականները եւս ընդգրկված լինեն միսիոներական գործունեության մեջ, եւ պատահական չէ, որ Իրանի հայ բողոքականները նույնպես դառնում են հակազդեցության թիրախ: Նրանց նկատմամբ հակազդեցությունն ակնառու էր 1990-ական թթ. եւ դրսևորվում էր հայ բողոքական գործիչների վրա հարձակումներով: Այն ժամանակ երկու հայ բողոքական կրոնավոր զոհ գնաց այդպիսի հարձակումների:

Ներկայումս իրավիճակը հայ բողոքականների համար ավելի բարվոք է, քան 1990-ական թթ., սակայն ընդհանուր առմամբ իրանական պետության եւ մոլեռանդ կրոնավորների բացասական վերաբերմունքը բողոքականների եւ նրանց միսիոներների նկատմամբ չի փոխվել: Այստեղ խնդիրը չի սահմանափակվում միայն հայ բողոքականների անվտանգության հարցով: Նրանց նկատմամբ իրանական հասարակության բացասական վերաբերմունքը կարող է վերաճել իրանահայության նկատմամբ բացասական վերաբերմունքի: Հետեւաբար, պահանջվում են մեծ զգուշավորություն եւ շրջահայացություն՝ իրանական հասարակությանը հայ բողոքականների դեմ կրկին չզրգռելու համար:



**ԱՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
*Բենիամին Պողոսյան***

2010թ. մայիսի 27-ին հրապարակվեց ԱՄՆ Ազգային անվտանգության նոր ռազմավարությունը: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ում Ազգային անվտանգության ռազմավարությունը պետության համար, թերեւս, երկրորդ կարեւոր փաստաթուղթն է՝ սահմանադրությունից հետո: Այստեղ հստակ նշվում են ներքին եւ արտաքին քաղաքականության տարբեր ոլորտներում ԱՄՆ-ի առջեւ ծառայած մարտահրավերները եւ դրանց հաղթահարման ուղիները:

Սովորաբար ԱՄՆ յուրաքանչյուր նախագահ պաշտոնավարման սկզբում ձեռնամուխ է լինում ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակմանը՝ նաեւ այդ փաստաթղթի միջոցով ներկայացնելով սեփական վարչակազմի ներքին եւ արտաքին քաղաքական հիմնական առաջնահերթությունները: Նախորդ տասնամյակի ընթացքում ԱՄՆ-ում հրապարակվել է երկու ազգային անվտանգության ռազմավարություն՝ 2002 եւ 2006թթ., որոնք կրում էին նախագահ Բուշ կրտսերի վարչակազմի օրոք զգալի ազդեցություն ունեցող նեոպահպանողական հոսանքի գաղափարական ազդեցությունը: Այդ ռազմավարություններում ԱՄՆ հիմնական նպատակ էր հռչակվում պայքարն ահաբեկչության դեմ, ինչպես նաեւ աշխարհում ժողովրդավարության եւ ազատության տարածումը: Ընդ որում, շեշտվում էր, որ ժողովրդավարության ընդլայնումը ԱՄՆ կարեւորագույն առաջնահերթություններից մեկն է եւ երկրի ազգային անվտանգության ապահովման հիմնական գործիքը: 2006թ. ռազմավարության մեջ որպես այդ քաղաքականության ընթացքում ձեռք բերված հաջողություններ էին հիշատակվում 2003թ. «վարդերի հեղափոխությունը» Վրաստանում, 2004թ. «նարնջագույն հեղափոխությունն» Ուկրաինայում, 2005թ. Լիբանանի եւ Ղրղզստանի իրադարձությունները:

Նախագահ Օբաման դեռեւս նախընտրական քարոզարշավի ընթացքում հստակ հայտարարել էր, որ հաղթանակի դեպքում զգալի փոփոխություններ է իրականացնելու ԱՄՆ թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականության մեջ եւ, բնականաբար, նրա օրոք հրապարակված ազգային անվտանգության առաջին ռազմավարությունը կրում է այդ

փոփոխությունների ազդեցությունը: Այսպես, եթե 2002 եւ 2006թթ. ռազմավարություններն ունեին հիմնականում արտաքին քաղաքական ուղղվածություն, ապա այս անգամ զգալի ուշադրություն է դարձվում ԱՄՆ ներքին խնդիրներին, այդ թվում կրթությանը, տնտեսական աճին, միջազգային ասպարեզում ԱՄՆ մրցունակության ապահովմանը, առողջապահական համակարգի բարեփոխումներին:

Զգալի են նաեւ տարբերություններն արտաքին քաղաքականությանն առնչվող մոտեցումներում: Եթե Բուշ կրտսերի օրոք ընդունված ռազմավարություններում ԱՄՆ արտաքին քաղաքական թիվ մեկ առաջնահերթություն էր հռչակվում պայքարն ահաբեկչության դեմ եւ ժողովրդավարության տարածումը, ապա նոր ռազմավարությունը հստակ հայտարարում է, որ ԱՄՆ-ը պատերազմ չի վարում ո՛չ ահաբեկչության եւ ո՛չ էլ, առավել եւս, իսլամի դեմ: Շեշտվում է այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը պայքարում է կոնկրետ կազմակերպության՝ «Ալ Բաիդայի» դեմ, որն ահաբեկչական հարձակումներ է ծրագրում ԱՄՆ-ի եւ վերջինիս դաշնակիցների հանդեպ: Օբամայի վարչակազմը փաստացի հրաժարվում է նաեւ ժողովրդավարության արտահանման քաղաքականությունից: Նոր ռազմավարությունում, իհարկե, խոսվում է ժողովրդավարության եւ մարդու իրավունքների պահպանման կարեւորության, ինչպես նաեւ այդ արժեքների տարածման խնդրում ԱՄՆ շահագրգռվածության մասին: Միաժամանակ հստակ շեշտվում է, որ ԱՄՆ-ը մտադիր չէ որեւէ երկրի պետական կառավարման ինչ-որ համակարգ պարտադրել, ընդունվում է այն փաստը, որ մշակութային եւ պատմական ուղու տարբերությունները կարող են հանգեցնել տարբեր պետություններում ժողովրդավարության գաղափարի տարատեսակ կիրառումների:

2010թ. ռազմավարությունն առաջնահերթ ուշադրություն է հատկացնում կրթության հիմնախնդիրներին: Նշվում է այն մասին, որ վերջին տարիներին ԱՄՆ-ում անհրաժեշտ ներդրումներ չեն կատարվել կրթության ոլորտում, ինչի հետեւանքով ԱՄՆ-ը զգալի չափով կորցրել է իր մրցունակությունը: Ազգային անվտանգության նոր ռազմավարությունը որակյալ եւ մատչելի կրթական համակարգի առկայությունը հռչակում է զարգացած եւ մրցունակ տնտեսություն ունենալու հիմնական նախապայման: Հատկապես շեշտվում է մաթեմատիկական, ճարտարագիտական, տեխնիկական կրթության կարեւորությունը: Հստակ խնդիր է դրվում առաջիկա տարիների ընթացքում վերականգնել ԱՄՆ կրթական համակարգի առաջատար դիրքերն աշխարհում, ընդ որում, հիմնական շեշտադրումը կատարվում է դպրոցական կրթության վրա, քանի որ համալսարանական

կրթության մակարդակով ԱՄՆ-ը շարունակում է պահպանել առաջատար դիրքերն աշխարհում:

Ազգային անվտանգության նոր ռազմավարությունում զգալի ուշադրություն է հատկացված նաեւ ԱՄՆ տնտեսության վիճակին, ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառներին եւ դրանք հաղթահարելու ուղիներին: Միաժամանակ անդրադարձ է կատարվում նաեւ համաշխարհային տնտեսական համակարգին: Շեշտվում է այն հանգամանքը, որ նոր ճգնաժամերի կանխման առավել կարեւոր նախապայմանը վերջին տասնամյակների ընթացքում աշխարհում ձեւավորված տնտեսական համակարգի լուրջ փոփոխությունն է: ԱՄՆ-ի համար անընդունելի է հռչակվում այն իրավիճակի շարունակումը, ինչի արդյունքում ԱՄՆ-ը աստիճանաբար վերածվել է ասիական մի շարք պետությունների, եւ առաջին հերթին Չինաստանի արտադրանքի սպառման շուկայի. ընդ որում, այդ ապրանքների սպառման համար ամերիկացիներն անընդհատ պարտքեր են կուտակում, իսկ արտահանման ծավալների ավելացման շնորհիվ տնտեսական աճ արձանագրած պետությունները՝ տարադրամային պաշարներ, միաժամանակ, դառնալով ԱՄՆ խոշոր պարտատերեր:

Ստեղծված իրավիճակն արմատապես փոխելու համար շեշտվում է ԱՄՆ-ում արտադրության եւ արտահանման ծավալներն ավելացնելու անհրաժեշտության մասին: Ընդգծվում է մինչեւ 2014թ. ԱՄՆ արտահանումը երկու անգամ ավելացնելու ծրագրի իրականացման կարեւորությունը: Միաժամանակ, Օբամայի վարչակազմը հայտարարում է բյուջետային առավել խիստ քաղաքականություն իրականացնելու մտադրության մասին, որի նպատակը ԱՄՆ բյուջեի ահռելի դեֆիցիտի աստիճանական նվազումն է: Տնտեսությանն առնչվող հատվածում ԱՄՆ-ը պատրաստակամություն է հայտնում բարեփոխումների ենթարկել Չամաշխարհային բանկի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարման համակարգերը՝ առավել մեծ դերակատարում հատկացնելով վերջին տարիներին համաշխարհային տնտեսության մեջ զգալի ազդեցություն ձեռք բերած երկրներին: Միաժամանակ, շեշտվում է այն հանգամանքը, որ համաշխարհային տնտեսական համակարգի կառավարման գործում առավել մեծ իրավունքներն անխուսափելիորեն պետք է հանգեցնեն նաեւ պատասխանատվության չափի ավելացմանը: ԱՄՆ-ը հայտարարում է նաեւ համաշխարհային տնտեսությանն առնչվող խնդիրների կարգավորումն աստիճանաբար «Մեծ ութնյակից» դեպի «Մեծ քսանյակ» տեղափոխելու մտադրության մասին:

Ռազմավարության մեջ զգալի տեղ է հատկացված «սառը պատերազմի» ավարտից հետո անվտանգության նոր համակարգի ձևավորման հիմնախնդրին: Նշվում է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված միջազգային հարաբերությունների համակարգը չի համապատասխանում 21-րդ դարում առկա ուժերի իրական հարաբերակցությանը, ինչն իր հերթին լուրջ խոչընդոտներ է ստեղծում տարաբնույթ խնդիրների կարգավորման ընթացքում: Օբամայի վարչակազմը շեշտում է միջազգային ինստիտուտներում եւ կառույցներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Միաժամանակ, ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունը միջազգային հարաբերությունների նոր ձևավորվող ճարտարապետությունում շեշտում է դաշինքների կարեւորությունը: Հստակ նշվում է այն մասին, որ ոչ մի պետություն չի կարող միայնակ հաղթահարել 21-րդ դարի մարտահրավերների զգալի մասը: Օբամայի վարչակազմը հայտարարում է աշխարհի այլ ազդեցիկ կենտրոնների հետ ակտիվ համագործակցություն հաստատելու մտադրության մասին՝ նշելով, որ նախորդ տարիներին ԱՄՆ ձեռնարկած միակողմանի գործողությունները հանգեցրել են ԱՄՆ-ի հանդեպ անվստահության եւ բացասական տրամադրությունների աստիճանական խորացմանը:

Միջազգային հարաբերություններում ԱՄՆ նոր քաղաքականության անկյունաքար է հռչակվում հարաբերությունները եվրոպական դաշնակիցների, առաջին հերթին ՆԱՏՕ-ի անդամ պետությունների եւ Եվրամիության հետ: Նշվում է, որ ԱՄՆ-ը շարունակելու է ջանքերը Բալկաններում կայունության եւ ժողովրդավարության տարածման, ինչպես նաեւ Կովկասում եւ Կիպրոսում հակամարտությունների կարգավորման ուղղությամբ: Անդրադարձ է կատարված նաեւ թուրք-ամերիկյան հարաբերություններին: Նշվում է, որ ԱՄՆ-ը շարունակելու է համագործակցությունը Թուրքիայի հետ՝ հատկապես տարածաշրջանային կայունության հաստատման ջանքերում: Հնդկաչինում եւ Հեռավոր Արեւելքում միջազգային անվտանգության պահպանման կարեւոր նախապայման են հռչակվում ԱՄՆ դաշնակցային հարաբերությունները ճապոնիայի, Հարավային Կորեայի, Ավստրալիայի, Ֆիլիպինների եւ Թաիլանդի հետ:

Ինչ վերաբերում է միջազգային կառույցների բարեփոխմանը, ԱՄՆ-ը աջակցում է ՄԱԿ Անվտանգության խորհրդի, ինչպես նաեւ կազմակերպության այլ կառույցների բարեփոխումներին: Միաժամանակ, բացակայում է հստակությունն այն խնդրում, թե արդյոք ԱՄՆ-ը պատրաստ է

ընդլայնել ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամների թիվը:

Ռազմավարությունում զգալի տեղ է հատկացված նաեւ Չինաստանի եւ Ռուսաստանի հետ հարաբերություններին: Նշվում է, որ ԱՄՆ-ը շարունակելու է դրական եւ կառուցողական հարաբերությունները Չինաստանի հետ եւ ողջունում է վերջինիս՝ պատասխանատու առաջնորդի դերակատարության ստանձնումը կլիմայի փոփոխության, զանգվածային ոչնչացման զենքի չտարածման եւ այլ ոլորտներում: Շեշտվում է այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը եւ Չինաստանը չեն կարող համաձայնության հասնել բոլոր ոլորտներում, այդ թվում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդրում, սակայն անհամաձայնությունները չպետք է կանխեն համագործակցության շարունակումը:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի հետ հարաբերություններին, ապա շեշտվում է այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը փորձում է Ռուսաստանի հետ կառուցել կայուն, բազմաշերտ համագործակցություն՝ հենված փոխադարձ շահերի վրա: Նշվում է, որ ԱՄՆ-ը շահագրգռված է ուժեղ, բարգավաճ, խաղաղ եւ միջազգային նորմերը հարգող Ռուսաստանի առկայությամբ: Միաժամանակ, ԱՄՆ-ը աջակցելու է Ռուսաստանի հարեւանների ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը:

Օրամայի վարչակազմի կողմից հրապարակված առաջին ռազմավարությունում զգալի տեղ է հատկացված նաեւ Իրանի հետ հարաբերություններին: Շեշտելով այն հանգամանքը, որ Իրանը մեկուսացնելու եւ վերջինիս հետ երկխոսության փորձերից հրաժարվելու քաղաքականությունը չի կանխել Իրանի միջուկային ծրագրի զարգացումը, ընդհակառակը, այդ պետության վարքագիծն ավելի սպառնալից է դարձել, փաստաթուղթն Իրանի հետ հարաբերություններում նոր մոտեցման կոչ է անում: Նշվում է, որ ԱՄՆ-ը Իրանին առաջարկում է բարելավել հարաբերությունները եւ համագործակցություն հաստատել մի շարք ոլորտներում, ինչը կարող է նպաստել Իրանի համար ավելի բարենպաստ ապագայի կերտմանը: Սակայն դրական զարգացումները հնարավոր են միայն այն դեպքում, եթե Իրանի իշխանությունները հրաժարվեն իրենց ներկա քաղաքականությունից եւ քայլեր ձեռնարկեն միջազգային հանրության վստահությունը շահելու ուղղությամբ: Հակառակ պարագայում, Իրանի մեկուսացման գործընթացն էլ ավելի կխորանա՝ դրան բնորոշ բոլոր բացասական հետեւանքներով:

Նոր ռազմավարությունում ուշադրություն է դարձվում նաեւ ցեղասպանությունների եւ զանգվածային սպանությունների կանխման խնդրին: Նշվում է, որ ԱՄՆ-ը, դաշնակիցների հետ սերտ համագործակցություն

հաստատելով, քայլեր է ձեռնարկելու նմանատիպ երեւոյթների կրկնութիւնն թույլ չտալու համար՝ գործադրելով դիվանագիտական, հումանիտար, ֆինանսական, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ ռազմական միջոցներ:

2010թ. մայիսի 27-ին հրապարակված ԱՄՆ Ազգային անվտանգության նոր ռազմավարութունը վկայում է արտաքին հարաբերութիւններում առավել իրատեսական քաղաքականութիւն իրականացնելու նախագահ Օբամայի վարչակազմի մտադրոյթան մասին, քաղաքականութիւն, որը հենվում է միջազգային այլ ուժային կենտրոնների հետ համագործակցութեան, այլ ոչ թե միակողմանի որոշումների եւ մյուս պետութիւնների շահերի հաճախակի անտեսման վրա:

**ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ «ԱՐԵՎԵԼՅԱՆ  
ԳՈՐԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ**  
*Սուրեն Սարյան*

Ինչպես հայտնի է, մոտ մեկ տարի առաջ Եվրոպական միությունն ընթացք տվեց Արևելյան Եվրոպայի երկրների հետ համագործակցության նոր՝ «Արևելյան գործընկերություն» անվանումը կրող ծրագրին. 2009թ. մայիսի 7-ին ԵՄ 27 եւ գործընկեր 6 պետությունների (Յայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Մոլդովա եւ Բելառուս) ներկայացուցիչներ ստորագրեցին համաձայնագիր, որով նախատեսվում է «արագացնել քաղաքական մերձեցումը եւ խորացնել տնտեսական ինտեգրումը» Եվրամիության ու վերոհիշյալ վեց պետությունների միջև:

Մեծ հաշվով, «Արևելյան գործընկերությունը» որևէ նոր բան չէր ներկայացնում՝ հանդիսանալով ԵՄ-ի կողմից 2003թ. ի վեր իրականացվող Եվրոպական հարեւանության քաղաքականության շարունակությունը:

Նախաձեռնելով «Արևելյան գործընկերությունը»՝ ԵՄ-ը միասնականացրեց նախկին խորհրդային վեց պետությունների հետ իր փոխհարաբերությունները: Փաստորեն, այդ երկրների հետ տարվում է նույն քաղաքականությունը, որը կիրառվեց 1990-ականներին նախկին սոցիալիստական ճամբարի երկրների հետ, երբ նրանք հետզհետե ինտեգրվեցին Եվրոպական միությանը:

Միեւնույն ժամանակ, որոշ փորձագետներ համարում են, որ այդ նախաձեռնությունը տվյալ փուլում այնքան էլ արդիական չէ, քանզի այն վերը նշված վեց երկրներին չի տալիս ԵՄ-ին անդամակցելու հեռանկար, իսկ ԵՄ-ում ֆինանսական ճգնաժամի առաջացրած խնդիրների հետեւանքով Բրյուսելը չունի հնարավորություններ մայրցամաքի արևելյան հատվածում իր ազդեցությունը ծավալելու համար:

Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ Եվրոպական քաղաքականությունը գերադասում է դանդաղ գործելակերպ, կարելի է պնդել, որ «ԱԳ» ծրագիրը լուրջ հետեւանքներ կարող է ունենալ ամբողջ հետխորհրդային տարածքի համար, ինչի մասին, մասնավորապես, վկայում է Ռուսաստանի մոտեցումը ծրագրին: Հենց սկզբից Եվրամիության ստրատեգների այս նախաձեռնությունն արժանացավ Ռուսաստանի բացասական վերաբերմունքին՝ առաջ բերելով վերջինիս խանդը. Մոսկվան ի դեմս «Արևելյան գործընկերության» տեսավ եւ շարունակում է տեսնել ԵՄ-ի կողմից

կատարվող ոսնձգությունն իր ավանդական ազդեցության գոտի համարվող հետխորհրդային տարածքի նկատմամբ:

Եվ չնայած ԵՄ պաշտոնյաների հավաստիացումներին, որ ծրագիրը որեւէ կերպ ուղղված չէ Ռուսաստանի դեմ եւ այն իրականացվելու է ՌԴ-ի հետ ԵՄ-ի համագործակցության ու մերձեցման ընթացքին զուգահեռ, Մոսկվան շարունակում է մեծ կասկածով վերաբերվել «ԱԳ»-ին եւ, հավանաբար, դեռ կփորձի բարդություններ ստեղծել դրա իրականացման ճանապարհին: Այսպես, վերջերս ՌԴ արտգործնախարար Ս.Լավրովը հայտարարեց, որ ԱՊՀ երկրների հետ իրականացվող «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը կարող է վնասել Ռուսաստանի հետ այդ երկրների հարաբերություններին, ավելացնելով, սակայն, որ անհանգստանալու պատճառ առայժմ չկա:

Միաժամանակ, Եվրոպայում չեն թաքցնում, որ այս նախաձեռնությունն ուղղակի արձագանք էր 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմին եւ պարբերական հաճախականություն ձեռք բերող ռուս-ուկրաինական գազային ճգնաժամներին:

Այս ծրագրով ԵՄ-ը հետապնդում էր նաեւ էներգետիկ անվտանգության ապահովման նպատակ. Բրյուսելում հույս ունեին, որ Չարավային Կովկասի երկրների օգնությամբ հնարավոր կլինի Կենտրոնական Ասիայից անցկացնել այլընտրանքային նավթա- եւ գազամուղներ դեպի Եվրոպա:

«Արեւելյան գործընկերության» շրջանակներում պետք է իրականացվի գործընկեր երկրների օրենսդրության հարմարեցումը ԵՄ իրավական նորմերին, ինչն արդեն մղում է այդ երկրներին Եվրոպական քաղաքական ազդեցության դաշտ: Նույնը կատարվում է ազատ առեւտրային գոտիների ստեղծման հարցում: Այսպես, Ուկրաինան, Մոլդովան, Չայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանն արդեն բանակցություններ են վարում՝ ԵՄ ազատ առեւտրի գոտուն միանալու համար, իսկ Բելառուսը ձեռնպահ է մնում Ռուսաստանի եւ Ղազախստանի հետ Մաքսային միությանը միանալուն, քանզի Բելառուսի տնտեսության համար ավելի շահավետ է գործել հենց Եվրոպական գոտուն:

Մոսկվայում նաեւ հասկանում են, որ այն պահից, երբ Ուկրաինան, Մոլդովան եւ երեք հարավկովկասյան պետությունները (Բելառուսի հետ դեռեւս բանակցություններ չեն տարվում) ստորագրեն ԵՄ-ի հետ համապատասխան պայմանագրերը, կարելի է ասել, որ ԱՊՀ-ն դադարում է գոյություն ունենալ, քանի որ այն բոլոր համաձայնությունները, որոնց հիման վրա ստեղծվել էր հետխորհրդային տարածքը միավորող այդ կառույցը՝ ազատ առեւտրի գոտի, միասնական իրավական դաշտ, առանց



մուտքի արտոնագրերի բնակչության ազատ տեղաշարժ, դրանք բոլորն այլևս տարածվելու են ԵՄ-ի հետ վերոնշյալ երկրների հարաբերություններում:

Ներկայում Եվրամիության քաղաքականությունն «արելեյան» ուղղությամբ ենթարկվում է վերարժեւորման եւ էական մշակման: Եվրոպական ստրատեգիաները շեշտում են, որ հիմա բացվում են նոր հնարավորություններ, եւ եվրոպական քաղաքական վերնախավը գալու է այն գաղափարին, որ Եվրոպայի համար փրկության միակ ուղին ընդլայնվելն է:

Նման մոտեցումն ունի որոշակի հիմքեր: 2009թ. ուժի մեջ մտած Լիսաբոնի պայմանագրով ԵՄ-ը փաստորեն վերածվեց թեւ թույլ, բայց դաշնության: Ծավալվող տնտեսական ճգնաժամն էլ ավելի է արագացնում մայրցամաքի միավորման գործընթացը: Այսպես, եվրոյի ճգնաժամը բերում է միասնական ֆինանսական ու բյուջետային քաղաքականության ձեւավորմանը: Սկսվում է ԵՄ ինտեգրման նոր փուլը, որի տրամաբանական սկիզբն է համարվում Հունաստանի կամ Կենտրոնական Եվրոպայի երկրների ֆինանսական փրկությունը: Այս առումով Եվրամիությունը դուրս է գալիս դեպի տարածաշրջանային առաջնորդության ավելի բարձր մակարդակ, քան նա ուներ մինչեւ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Ընդ որում, դա արվում է ԱՄՆ համաձայնությամբ: ԵՄ-ում ստեղծված ֆինանսական ճգնաժամն ուժեղացրեց եվրոպական պետությունների կախվածությունը Միացյալ Նահանգներից: Այն, որ ԵՄ-ը համաձայնեց հանձնել Հունաստանի «փրկության գործը» ԱՄՆ-ին, գնահատվում է որպես եվրոպական ինքնուրույնության սահմանափակում՝ հոգուտ Վաշինգտոնի:

Դրա հետ մեկտեղ, Բ.Օբամայի վարչակազմը, փաստորեն, վերջ դրեց «հին» ու «նոր» Եվրոպաների բաժանմանը, ինչպես նաեւ փակվեց արելեյան եվրոպական պետությունների կողմից Ռուսաստանին հակադրվելու ժամանակաշրջանը: Ուկրաինայի, Վրաստանի, Բելառուսի խնդիրները դադարեցին դիտվել որպես Վաշինգտոնի առաջնահերթ ուշադրությունը պահանջող հարցեր: Սառեցվեց ՆԱՏՕ-ին Ուկրաինայի ու Վրաստանի անդամակցության թեման: Փոխարենը Վաշինգտոնն ուղղորդում է ԵՄ արտաքին քաղաքականությունը դեպի հետխորհրդային տարածք՝ ներառյալ Ռուսաստան եւ Կասպիական ավազան: Այսպիսով, ենթադրվում է, որ ԱՄՆ-ը ձգտում է ստեղծել հակակշիռներ՝ ի դեմս ԵՄ-ի ու Ռուսաստանի, որոնք ստիպված են լինելու հաճախ ապավինել ամերիկյան հզորությանը:

Այս մոդելը փորձելու է ապահովել ամերիկյան գլոբալ հեգեմոնիան

մեղմ տեսքով, ինչին է ուղղված նաև ս.թ. մայիսի 27-ին հրապարակված ԱՄՆ Ազգային անվտանգության նոր ռազմավարությունը, որտեղ առաջնային են հռչակվում համաշխարհային ասպարեզում ԵՄ-ի հետ Միացյալ Նահանգների ռազմավարական համագործակցության սկզբունքը եւ ՌԴ շահերի հետ հաշվի նստելու մոտեցումը:

Հաշվի առնելով, որ ԱՄՆ ռազմավարության ուշադրությունը կենտրոնանում է Մեծ Մերձավոր Արեւելքի, մասնավորապես, Իրանի, ինչպես նաև Հարավային ու Կենտրոնական Ասիայի ուղղությամբ, ապա Արեւելյան Եվրոպայի ուղղությունը «հանձնվում» է ԵՄ եւ ՌԴ տնօրինությանը: Այս առումով Վաշինգտոնն իր գործընկերներին առաջարկում է իրենց վրա վերցնել հարակից տարածաշրջաններում կայունության ապահովման բեռը: Նախաձեռնելով Մոսկվայի հետ հարաբերություններում «վերաբեռնավորման» քաղաքականությունը՝ ԱՄՆ-ը համաձայնեց Ռուսաստանի տարածաշրջանային դերի բարձրացմանը: Սակայն, հետաքրքրական է, որ այդ քայլը կատարվեց ոչ միայն ԱՄՆ-ում տնտեսական ճգնաժամի, այլ նաև ԵՄ-ի եւ Ռուսաստանի թուլացման պայմաններում: Իսկ դա նշանակում է, որ ԱՄՆ ռազմավարական շահերի համար ԵՄ-ի կամ Ռուսաստանի տարածաշրջանային դերակատարման ուժեղացումը լուրջ վտանգ չի ներկայացնում:

Ավելին, դա նաև նշանակում է, որ Ռուսաստանն իր վրա է վերցնում մի լրացուցիչ բեռ՝ համաձայնելով ֆինանսավորել նախակուլապային վիճակում գտնվող նախկին խորհրդային հանրապետությունների տնտեսությունը, ինչպես, օրինակ, Ուկրաինայի դեպքում, որին Մոսկվան մոտակա տասը տարում ավելի էժան գնով գազով է ապահովելու՝ Ղրիմում ռուսական նավատորմի խորհրդանշական ներկայության պահպանման դիմաց: Այս առնչությամբ հետխորհրդային տարածքում այսօր ընթացող գործընթացները ոչ թե խորհրդային կայսրության վերականգնման կամ Ռուսաստանի շուրջ նոր ինտեգրացիոն բլոկի ստեղծման գործընթացներ են, այլ ընդամենը ժամանակավոր քաղաքական իրողություն, որը հակակշռվում է նույն հետխորհրդային երկրների եւ ԵՄ-ի միջեւ քաղաքական ու սոցիալական կապերի ամրապնդման գործընթացով:

Իր հերթին ԵՄ արտաքին քաղաքականությունը, դառնալով ավելի համախմբված, հեռանում է Ռուսաստանի հետ առճակատման ուղեգծից, ինչը ցույց են տալիս Ուկրաինայի սրընթաց մերձեցումը Մոսկվայի հետ, Լեհաստանի եւ Ռուսաստանի միջեւ դարավոր թշնամանքի մեղմացման միտումները եւ Եվրոպայի ու Ռուսաստանի միջեւ իրականացվող «Հյուսիսային հոսք» եւ «Հարավային հոսք» էներգետիկ նախագծերը: Դա

նշանակում է, որ քաղաքականապես ուժեղ ԵՄ-ը պետք է կարգավորի Արեւելյան Եվրոպայի խնդիրները՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների փաթեթով:

Որոշ փորձագետների կարծիքով, այսօր Արեւմուտքը մտնում է ռազմավարական «դադարի փուլ», որի ավարտից հետո սկսվելու է ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի ընդլայնման հաջորդ փուլը, որը կներառի Ռուսաստանին եւ մյուս հետխորհրդային երկրներին: Որպես դրա ազդանշաններ կարելի է ընդունել վերջերս գերմանացի ազդեցիկ քաղաքագետների եւ բարձրաստիճան գինվորականների հնչեցրած տեսակետները՝ ՆԱՏՕ-ին Ռուսաստանի անդամակցության հարցը քննարկելու մասին: Նրանք կարելու են Ռուսաստանը Արեւմուտքի կողմից «պաշարված ամրոցի» հոգեբանությունից ազատելու գաղափարը: Ռուսաստանում եւս ամրապնդվում է այն տեսակետը, որ երկրի արդիականացման համար անհրաժեշտ է ավելի սերտ համագործակցություն ԵՄ-ի հետ:

Մյուս գործոնը, որը բերեց ԵՄ-ի «արեւելյան քաղաքականության» վերագնահատմանը, այսպես կոչված, «զարգացող աշխարհի» երկրների համաշխարհային կշռի մեծացումն է:

Չինաստանի արագ աճող գլոբալ ազդեցությունը լուրջ մտահոգություն է պատճառում թե՛ ԵՄ-ին, թե՛ Ռուսաստանին: Պեկինի տնտեսական քաղաքականությունն արդեն հսկայական վնասներ է պատճառել եվրոպական երկրների տնտեսությանը:

Չինաստանին եւ Յնդկաստանին միացան նաեւ Բրազիլիան ու Թուրքիան, որոնք Իրանի հետ «միջուկային գործարքի» կնքման արդյունքում ցուցադրեցին իրենց գլոբալ դերակատարության հավակնությունները: Նման նոր խաղացողների առաջացման պայմաններում պարզ է դառնում, որ ո՛չ ԵՄ-ը, ո՛չ Ռուսաստանն այլեւս չեն կարող հավակնել համաշխարհային միակ գերտերության՝ ԱՄՆ-ի եւ մնացած աշխարհի միջեւ համագործակցության եւ հակամարտությունների հարցերում միջնորդի դերակատարությանը: Եթե առաջներում եվրոպական երկրները եւ Ռուսաստանն անընդհատ փորձում էին հանդես գալ «զարգացող աշխարհի» իրավունքների եւ շահերի պաշտպանների դերում, ապա այսօր այդ գործառույթը հաջողությամբ իրականացնում են այդ աշխարհի առաջատար երկրները: Այս վիճակում ԵՄ-ի եւ ՌԴ-ի մերձեցումը ԱՄՆ-ի հետ դառնում է օրինաչափ:

Արեւմուտքն էլ, իր հերթին, չի ցանկանում թողնել Ռուսաստանին մեն-մենակ Ասիայի ծագող տերությունների դեմ, իսկ նրա սիբիրյան հարստությունները՝ Պեկինին:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը

դեռ երկար ժամանակ պահպանելու է իր ամորֆությունը, ինչն արտացոլում է ԵՄ դասական քաղաքական սկզբունքը՝ ազդել, սակայն ուղղակի չմիջամտել: Եվրամիությունը դեռևս չի հստակեցրել իր «արեւելյան քաղաքականության» վերջնական նպատակները, բայց միեւնույն ժամանակ չի ցանկանում հետխորհրդային տարածքի երկրներին դուրս թողնել իր ազդեցության ոլորտից: Ամենայն հավանականությամբ, ԵՄ «արեւելյան քաղաքականության» նպատակները կհստակեցվեն այն ժամանակ, երբ ԵՄ-ը դուրս կգա ներկա ֆինանսական ճգնաժամից՝ արդեն որպես ավելի կենտրոնացված, դաշնության հատկանիշներ կրող գլոբալ ուժային կենտրոն: Անշուշտ, եթե կենտրոնախույս տրամադրությունները նոր անակնկալներ չմատուցեն:

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՅԱՏ .....	1
<b>Ռուբեն Մելքոնյան</b>	
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	3
<b>Հայկ Գաբրիելյան</b>	
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ .....	7
<b>Արտաշես Տեր-Հարությունյան</b>	
ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈԻԼԸ .....	14
<b>Արաքս Փաշայան</b>	
ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆԵՌՕՍՄԱՆԻՉՄԻ ԱՐԴԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	19
<b>Սեւակ Սարուխանյան</b>	
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ .....	24
<b>Վահրամ Հովյան</b>	
ԻՐԱՆԻ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ .....	28
<b>Բենիամին Պողոսյան</b>	
ԱՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	33
<b>Սուրեն Սարյան</b>	
ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ .....	39

*Շապիկին պատկերված է  
Կտուց կղզին (Վանա լիճ)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երևան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՍՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: